

U.S. Cee

19350

2011-05

301.715

Հ - 51

Ն. Ա. ՇԵՐ

№1

17764 Ա

Ա Յ Ն Ա

Թարգմ. Յն. ՔՈԼՈՅԵՅՈՆ
Նկարները Ա. ԿՐՍԿՅՈՎԻ



891.715
Հ - 51

ԳԵՏՐԱՄԱՍ

1935

ՑԵՐԵՎՈՆ

13.07.2013

4988

ՓՈՅՏ 0.20.00.Կ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գլան վ 1 ի տ 8 6
Հրատ. № 3266
Տիրաժ 3000




23836-5

Պատ. Խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեղական Խմբ. Ա. Առաքել

Խմբագիր՝ Ա. Տեր-Դավթյան
Տեղական Խմբ. Ա. Առաքել

Հանձնված ե արա. 14/VIII 1935 թ. Առողջապահ և տպելու 8/IX 1935 թ.
Ս. Ա. Ա. 148 × 210. Պատվիր 3962

Տիպոգրաֆիա իմ. Ստալին 1902 թ. ԱՇԿՊ Ռոտով նա-Դոնու.



I.

ՎՈՒԼՔԻԶԱԴԻՆԵՆ ՄԻ ՈՒՐԱԽ ԹՈՒՐԲ ԳՐԱԴԱՐԱՆԱՊԵՏ ԵՐ

Կուլիզագեն մտավ սենյակը։ Սենյակում պատերի մոտ գրված եյին դատարկ դարակներ, իսկ հատակին՝ մեխած արկղներ։ Սրկղներից մեկի վրա քնած եր մի դեղին կատու։ Պատուհանում գրված եր կեղտոտ ջրով լի մի բանկա, վորի մեջ ձկնիկներ եյին թղթոտում։ Մյուս պատուհանում ընկած եր թղթերով լի մի թղթապանակ, ժանգոտ մեխիք, պահածոյի բանկա։


Պատուհանից յերևում եր փողոցից այն կողմը, հեռու ցածում տարածվող ծովի մի կանաչ շերտ։ Բոլորովին նեղ-լիկ մի շերտ, վոր կարծես թե մատիտով գծված լիներ թղթի վրա, իսկ նրանից վերև արևի դեղնակարմիր գունդն եր՝ շողերը դեպի վեր, ինչպես նկարում են փոքրիկ յերեխաները։

Բայց, իհարկե, այդպես թվում եր միայն, վորովինետե
ծովն իսկական եր, մեծ և կանաչ, արծաթե ալիքներով,
սպիտակ նավերով, լախ ծովափնյա փողոցով և ծովի վերեր
տարածված՝ ահազին, կապույտ յերկնքով:

Կուլիգաղեն հենց յերեկ եր, վոր նավով գալիս եր այդ
ծովի վրայով, իսկ այսոր նա արդեն կանգնած եր այս-
տեղ, սենյակի մեջտեղում և, դիտելով սենյակն ամեն կող-
մից, նա լսելի կերպով մտածում եր.

— Իսչի՞ց ոկսել ի՞նչ աներ:


Կուլիգաղեն նստեց պատուհանում և այստեղից դուրս
նայեց: Փողոցը քնած եր: Մոխրագույն մի փողոց եր՝ միա-
տեսակ մոխրագույն տներով: Այդ տներն ունեին միատե-
սակ մոխրագույն պատուհաններ, միատեսակ փափուկ



կտուրներ և միատեսակ դռներ: Տափակ կտուրները վրա,
իհարկե վնչ բոլորի, այլ մի բանիսի, ծալապատիկ նստած-
եյին միանման պառավ կանայք: Նրանք բուրդ եյին քըր-
քըում և փոշուց յերեմն փոշտում:

Փողոցով անցնում եր քնկոտ իշուկը՝ խուրջինը մեջ-
քին: Խուրջիսի մեջ մեղմիկ շրխշխկում եյին կճուճները, և
խուրջինի վրա վոտները պարզած, կարծես գետնին, նոտած
եր խուճում փափախով մի ծերուկ ու կամաց յերգում եր-

— Ոյ, յայլա, յայլա-լա,
Տես, մի լավ մարդ ահա՝
իշով գնում ե քաղաք...



— Ո՞ւր ես դու, գրադարանապետ, — հանկարծ լսեց
կուլիգաղեն: — Ո՞ւր ես դու, գրադարանապետ, մի ժամ ե՝
մենք քեզ ենք վնասում:

— Այստեղ եմ, այստեղ, Յեկեք այստեղ, — գոչեց կու-
լիգաղեն ու պատուհանից դեպի դուրս կախվեց: Սենյա-
կում մնացին միայն նրա վոտները՝ դարձնագույն սանդալ-
ներով:

Ապա կուլիգաղեն ցած թռավ պատուհանից՝ ամբող-
ջապիս փողոտված, ձեռքերն իրար խփեց, թափ տվեց անդ-
րավարտիկի փոշին և գնաց դեպի դուռը:

Այդ ըսպեյին դուռն արագ բացվեց և կարծես թե մի
ամբողջ խումբ յերեխաներ թափվեցին ներա: Այնքան բարձր
եյին ճշում, այնպես զիլ եր հնչում նրանց ծիծաղը և այն-
պես ուրախ եյին ներս հրում իրար. այնինչ յեկողները
չորս հոգի եյին միայն:

— Իսկ յես կարծում եյի, թե դուք չեք դա:

— Ամբ մենք խոստացել եյինք, — ասաց թմբկիկ այ-
տերով Մանաֆը: — Խոստացանք ու յեկանք: Դու մեզ այն
ասա, թե ի՞նչ անենք:

— Ի՞նչ անեք, — ծիծաղեց կուլիզադեն: — Ի՞նչ անե՞լ
Դու կարծում ես՝ յես գիտե՞մ, թե ի՞նչ պեսը ե անել:
Ֆաթման շթի մի նոր դերյա յեր հագել: Գլխին ։
դեղին շարֆ եր գցել:
«Ի՞նչ տարոբինակ գրադարանապետ ե, ինքն ել չգիտ,
թե ի՞նչ պիտի անել» — մտածեց նա և բարձր ձայն
հարցըրեց.
— Ո՞ւր ե գրադարանը, ո՞ւր են գրքերը:
Կուլիզադեն ցույց տվեց արկղները.
— Անա գրքերը:
Ապա ցույց տվեց սենյակը.
— Իսկ սա ել գրադարանը:
Արկղի վրա՝ դեղին կատվի կողքին արդեն նստել եր
Ղափլանը, կատուն ճկմկոտում եր, իսկ Ղափլանը բոռնցք-
ներով խփում եր արկղին ու գոռում.
— Ե՞յ, տուր մուրճը, իսկույն բաց կանեմ:
Ֆաթման դեմքը կնճոռտեց.
— Եստեղ միայն կկեղառտվեա:
— Ի՞նչ ևս ասում, Ֆաթմա, ոո չես գժվել: Ախր դու
ցանկացար, քեզ ել ընտրեցին, — բարկացած ասաց Մանաֆը՝
քաշելով Ֆաթմայի շարֆից:
Ֆաթման ուսը թափ տվեց:
— Թո՞ղ:
Իսկ կուլիզադեն իբր թե չսեց Ֆաթմայի խոսքերը:
— Սպասիր, դեռ բաց մի անի, — ասաց նա Ղափլանին:
— Իհարկե, սպասիր, — մոտ վագեց մոխրագույն աչքե-
րով Մայանեն, վորի ու մազերը շատ ձիգ հյուսված եյին: —
Տեսնում ես՝ ինչքան կեղտուա ե այստեղ:
— Գնանք, մի ավել ճարենք, — ասաց Մանաֆը թերը
քշտելով:
— Զուր եր, զուր եր: Մի դույլ ջուր: — Մայանեն վերց-
րեց շարֆը պիխից, թափ տվեց, ծալեց և պատուհանի փո-
շին ձեռքով սրբելով՝ շարֆը դրեց այստեղ: Ապա վագեց
կուլիզադեյի, Ղափլանի և Մանաֆի յետելից:
Մայանեն վագելիս, թվում նր, թե միանգամից հագար
վոչար ե վազում, ամբողջ մի հօտ, վորովնետն ամբողջ
ուժով թփթփացնում եր վոտները: Նա, իհարկե, դիմամբ
չեր անում: Յերբ նրան հարցնում եյին, թե ինչու յե այդ-

պես վազում, նա պատասխանում եր. «Վորովնետե յես
ծանը եմ, իսկ վոտներս ել հաստ են»: Մայանեյի մայրը
հառաչում եր ու ասում. «Այդ նրանից ե, վոր Ալլահը
սիալվել ու նրան աղջիկ ե ստեղծել, վոչ թե տղա»:
Ֆաթման կանգնած եր սենյակի մեջտեղը: Նրան թվա-
ցել եր, թե այստեղ ամեն բան ուրիշ տեսակ կլինի: Ահա
ինքը նստած ե սեղանի առաջ, իսկ սեղանի վրա՝ իր առաջ
փռված են գրքերը. պատերի մոտ դրված են գրքերով լիքը
դարակներ, ինչպես իսկական գրադարանում ե լինում. յե-
րիխանները մոտենում են նրան, գիրք խնդրում ու զար-
մանում նրա վրա, իսկ ինքը գրքեր ե բաժանում: Նա գիրք
ե տալիս միայն նրանց, ովքեր նրան դուր են գալիս: Թող
մի տեսնեն, թե նա ի՞նչ մեծ պաշտոն ունի և ի՞նչ գեղե-
ցիկ զգեստ ե հագել: Իսկ այսպես նա համաձայն չի: Նա
իսկի ել նրա համար չի սովորում գպրոցում, վոր գա այս-
տեղ հատակ լիքանա:

Յեկ վաթմթվելով իր շարֆով, ինչպես փոքրիկ թա-
փանցիկ չաղրայով, Ֆաթման զնաց դեպի գուռը:

— Դե, հեռացիր, — բղավեց Մանաֆը: վոր այդ ըռակե-
յին մյուս դռնով ներս եր մտնում՝ ջրով լի դույլը ձեռին: —
Դե, հեռացիր, առանց քեզ ել յոլա կգնանք:

Ֆաթման փքված՝ սանդուխքով ցած եր իջնում: Նրան
թվում եր, թե իրեն վիրափորել են: Մանաֆը մրթմրթում
եր քթի տակ:

— Հո զոռով չեն բերել նրան այստեղ, ինքն եր
ինդրում:

կուլիզադեն պազած՝ հավաքում ու կապում եր քանդ-
գած ավելլ: Մայանեն դիտում եր բանկայում լողացող
ձկնիկներին:

— Ի՞նչ ես կարծում, գրադարանապետ, սա կարող ե
մեզ պետք գալ: Զե՞ վոր կենդանի ձկներ են, այն ել յեր-
կու հատ:

— Իհարկե, կարող ե պետք ե գալ: — Կուլիզադեյի փո-
խարեն պատասխանեց Մանաֆը՝ փալասը դույլի մեջ քա-
մելով: — Իհարկե, կարող ե: Կենդանաբանական այդի կսար-
քենք:

— Ի՞նչ, կենդանաբանական այգի, — վախեցավ կու-
լիզադեն: — Այդ ի՞նչ հնարեցիր, Մանաֆ: Յեթե այստեղ

կենդանաբանական այդի սարքենք, իսկ մեր ընթերցարանը
վորտեղ կլինի:

— Դե, չե, միթե դու չես հասկանում: Նա ուզում ե
ասել ակվարիում,— ասաց Մայանեն:

— Դե, հա ելի, յես ել հենց ակվարիում եմ ասում,—
թավ ձախով ասաց Մանաֆը:

Նա կռացած՝ փալասն ուժով քսում եր հատակին:

Սենյակում բոլորովին լուռ եր: Միայն Մանաֆն եր՝
փնչացնելով ու քսիսալով՝ հատակի կեղառա ջուրն ավելով
սրբում տանում: Այդպես, իհարկե, յերբեք վոչվոք հատակ
չի լվանում, բայց, վոչինչ, լավ եր մաքրվում:

Կուլիզագեն, պատուհանը բարձրացած՝ ապակիներն եր
սրբում թաց շորով: Կեղառա ջուրը նրա ձեռներից հոսում
եր դեպի արմունկները, իսկ արմունկներից հոսում հատա-
կին ու խառնվում Ղափլանի ավելի տակ փոթորկվող ծո-
վին ու ովկիանոսին:

Հանկարծ Ղափլանը ծովի ու ովկիանոսի վրայով ցատ-
կոտելով վազեց դեպի կուլիզագեն ու շտապով դուրս քա-
շեց նրա գրանից ժամացույցը:

— Վայ, տղերք, ժամի մեկից քառորդ ե պակաս:

— Լավ նայեցիր: Չի կարող պատահել: Արդեն ուշա-
ցանք:

— Վոչ, շատ չենք ուշացել,— ասաց Մանաֆը: — Դու,
գրադարանապետ, մնացածն արդեն ինքով վերջացրու, իսկ
մենք դպրոցից հետո նորից կզանք: Կզանք չե, տղերք:

— Լավ, լավ, շուտ արեք, գնացեք:

— Առանց ինձ արկդները բաց չանես, լսում ես, գրա-
դարանապետ: Խնդրում եմ: Իսկ մուրճը պահիր,— ասում
եր Ղափլան՝ արդեն դռան շեմքին հասած: Նա շատ եր
սիրում մեխեր խփել ու խփած մեխերը դուրս քաշել, ծանր
բաներ կրել և յերբեմն յերազում եր այն մասին, թե ինչ
լավ կլիներ,— յեթե կայարանում բեռնակիր դառնար:

— Հանգիստ յեղիր,— ասաց կուլիզագեն: — Յես բոլորը
կանեմ:

Կուլիզագեն մնաց մենակը նա շարունակում եր սրբել
ապակիները: Բայց յեթե յերեխաները աեսնեյին, թե ինչ-
պես եր նա ծիծաղում, դեմքը ժամածուում և ինքն իրեն
խոսում, նրանք անպայման շատ կուրախանային:

«Ի՞նչ լավ ե, — մտածում եր կուլիզագեն: — Յեվ ի՞նչ
հիանալի տղերը են: Յեվ ի՞նչ ուրախ ու լուսավոր դար-
ձավ այստեղ, մեղ մտա:

— Աթաղա, բաղաղա, շամ շուլազի... — հանկարծ բարձ-
րաձայն յերգեց կուլիզագեն, ցած թռավ պատուհանից,
ընկավ ուղղակի լճացած ջրի մեջ, ցատկեց մյուս կողմը և
ավելի բարձր յերգեց.

— Շամ շուլազի աթաղա:

Դա մի առանձնահատուկ յերգ եր, վոր նման ե որի-
նակ՝ «Վայ լե-լե-լե, վայ լո-լո-լո» կամ «Ճըուլյա-լյա,
արուլյա-լյա», ինչպես յերգում են հայերն ու ոուսները:
Իսկ կուլիզագեն չե վոր թուրք եր, մի ջահել և ուրախ՝
թուրք գրադարանապետ:

II.

ԱՅՆԱՅԻ ԱՊՐԱՄ ՏԱՆ ԲԱԿԻ ՄԵԶՏԵՂՈՒՄ ԶՐՑՈՐ ԿԱՐ

— Այնա, այ Այնա, ասա՝
ինչու յեն ուլիկները լաց լի-
նում:

— Քնիր, Զփլաղ, քնիր, —
շնչում եր Այնան: — Վոչ վոք
լաց չի լինում:

Բայց Զփլաղը բոլորովին չի
ուզում քներ: Նա Այնայի հետ
միասին պառկում ե հատակին՝
մի նեղիկ ներքնակի վրա: Մենյակը փոքր ե, դատարկ և
ոդը ծանր: Ամբողջ ընտանիքը քնում ե հատակին՝ փա-
լասների վրա:

— Ուր ե իմ ուլիկը, ուր ե, Այնա, — հեծկլում ե
Զփլաղը:

Այնան քնած ե, բայց քնի միջից լսում ե Զփլաղի
ձայնը: Նա ձեռներով փնտում, շոշափում ե փոքրիկ բրդոտ
գունդը — խաղալիք ուլիկը և տալիս ե Զփլաղի ձեռքը:
Այսոր հայրը յեկել եր կառուցվող շենքից և բոլորի համար



Նվերներ եր բերել: Այնայի համար բերել եր տոպրակի մեջ՝ տասը հատ կոնֆետ, Զփլաղի համար ուլիկ, Մանաֆի համար ծայրակալով մատիտ, մոր համար գուլպաներ և ֆաթմա-տատիկի համար քթախոտ (բռնոթի):

Հայրն աշխատում է հեռու Քիշլիյում, վորտեղ բանվորական նոր ավան են կառուցում: Այնան լավ չի հասկանում, թե ինչ բան ե «բանվորական ավանը», բայց հայրն ասում է, վոր շուտով նրանք բոլորը կտեղափոխվեն այստեղ: Իսկ Մանաֆն արդեն յեղել ե այստեղ, տեսել ե ամբարձիկ մեքենան և նույնիսկ բարձրացել ե յերկրորդ հարկը: Միայն կարծես թե մայրը դժոնն ե և ֆաթմա-տատիկնել բարկանում ե:

Այնան քնած ե:

— Վայ, ինչ շոգ ե: Քայի մի տուր, Զփլաղ: Հո դուռլիկ չես:

Յեվ նրան թվում ե, թե իսկապես Զփլաղի փոխարեն ուլիկն ե պառկած և քացիներ ե տալիս նրա կըծքին, զբւխին, փորին: Այնան հրելով աղատվում ե ուլիկից և հանկարծ լսում ե, թե ինչպես ուլիկն սկսում ե ճշալ: Կարծես թե Զփլաղն ե ճշում:

— Ալլահի փողորմությունը համնի, ի՞նչ ե պատահել աղային,— լսեց Այնան մոր ձայնը: Սակայն նրան թվաց, թե մայրը խոսում է ինչ վոր հեռու տեղից: Այնան նստեց իր տեղում, բայց իսկույն նորից ցած ընկավ: Ապա նորից նստեց և սկսեց ձեռներով աչքերը տրորել: Նրա փոքրիկ հյուսերը ցցված ելին խճճված գլխին:


— Քնիր, Զփլաղ, յայլա-լայ, Զփլաղ, լայ,— մըթմըթաց Այնան և փայտե տիկնիկի նման նորից փայրը ընկավ անկողնին ու նույն փայրկյանին քնեց: Այն ժամանակ հառաչելով ու տնքտնքալով վեր կացավ մայրը:

— Քնիր, իմ տղա, իմ սեաչյա բալես:

Նա վերցրեց Զփլաղին ու ծալապատիկ նստեց Այնայի կողքին: Զփլաղը պառկած եր նրա գոգում:

«Հիվանդ ե բալես, հիվանդ ե աչքիս լույսը,— մտածում եր Զեյնաբը: — Վայ ինձ: Պիտի մոլլայի մոտ տանել սրան: Թող փրկի, աղատի: Մեկ ել Այնայի մասին պիտի խոսել նրա հետ»:

Զեյնաբը նստել, յերգեր եր շշնջում Զփլաղին, մտա-



ծում եր տան մասին, յերեխաների մասին, մեծ ծախսերը և այն մեծ նոր շենքի մասին, վոր կառուցում են հեռու Քիշլիյում:

Զեյնաբը շատ վորդիներ ուներ: Նրանք բոլորն ել ծնվել, վաղվել, հիվանդացել ելին այս տանը, քնել ելին այս նույն փալասների վրա: Ավագ վորդիներն արդեն ամուսնացել ելին — սրտիցը պոկվել: Նրանք իրենց առանձին կյանքն ունեն: Յեվ անա այս վերջինը, ծուռտիկ վոտներով այս փոքրիկ Զփլաղը նրա համար ամենից թանգ ե աշխարհում:

Արդեն լուսանում եր: Զընդաց առաջին ուղարի զանգակը: Շխկչակային մածոնի կճուճները՝ ծեր Մահմեդի խուրջինում: Ցածը, քաղաքում զբնգացին տրամվայները, աղմկեցին ավտոների շակները, ծովափնյա փողոցով, մեծ տների առջևից շտապով անցան պորտֆելավոր մարդիկ: Քնաթաթախ յերեխաները վագեցին գլուխ:

Այնան աչքերը բաց արեց ու ժպտաց: Նա միշտ առավտայան ժպտում եր, յերբ արթնանում եր:

Զփլաղն ամբողջ գիշերը նրա քունը խանգարել եր, սակայն առավոտը, արթնանալուն պես նա միշտ ժպտում եր: Ժպտում եր ամենից առաջ Զփլաղին, վոր մազլցելով բարձրանում եր նրա կըծքին, քաշըշում եր նրա հյուսերը, փչում եր աչքերին, վոր նա զարթնի: Ժպտում եր մօրը, փոշու

Հուսամուտից ներս թափանցող արևի շողերին, տրամվայի զընգոցին, իշուկի զոռոցին:

Հիմա ել նա ձգվեց անկողնում, բերանը լայն բացած՝ հորանջեց և ուրախ ժպտաց. Նա իսկույն հիշեց, վոր ներք-նակի տակ կոնֆետ ե պահել: Յերբ հայրը տվեց նրան տոպրակով կոնֆետը, Այնան մտածեց, «Ի՞նչքան շատ ե» և վորոշեց բոլորը միանդամից չուտել: Նա հաշվեց. տասը մտա, տասը կոնֆետ, տասը որ, Զփլաղին ել կարելի յետալ: Յերկար ժամանակ բավական ե. բայց հետո հանկարծ այնպես յեղավ, վոր նա բոլոր կոնֆետները կերավ: Մինչև յերեկո նրա մոտ մնաց միայն մի հատ, այն ել բոլորովին ճիւլտված:

«Զփլաղը թոցրած չինի՞»—մտածեց Այնան:—«Ե, դեռ մուռմ ե»: Ապա հանկարծ տեսավ մոր բարկացած, մտանող դեմքը և Զփլաղին՝ մոր զրկում:

— Ի՞նչ ե պատահել, գաղա:

— Վեր կաց, վեր, տեսնում ես յերեխան հիվանդ ե:

Ոյ, քանի անդամ ե հիվանդացել ինքը—Այնան և քանի անդամ—Մանափը, բայց սարսափելի չի յեղել: Յեվ մայրը յերբեք այդպես չի բարկացել:

Այնան լուռ վեր թռավ տեղից, կոնֆետը դրեց ծոցը, թափ տվեց զգեստը, ձեռներին թքեց, հարթեց մազերը: Ապա վազեց բակը՝ լվացվելու: Զբհորի մոտ արդեն նստած եր ֆաթմա-տատիկը: Նա քիթը լցնում եր քթախոտով ու փոշտում: Բակում նա համարվում եր ամենքից լավ փորշ-տացովը: Նա կարող եր քսան անդամ իրար յետեկից փորշ-տալ: Յեվ հպարտանում եր դրանով: Սակայն յերբ ֆաթմա-տատիկը փոշտում եր, ավելի լավ եր նրան չմոտենալ: Այդ ժամանակ նա շատ լուրջ եր լինում և բարկացած:

Ամեն առավոտ ջրհորի մոտ հայհոյում եյին իրար, կըռ-պում եյին, բակին վերաբերվող բոլոր հարցերը քննում: Յեվ ամեն առավոտ ֆաթմա-տատիկը, բակի ամենապառավ կինը, ամենից առաջ եր գալիս ջրհորի մոտ: Նա սիրում եր, վոր ամեն բան կարգին լինի, վոր կարգ ու կանոն պահպանվի—ալլահի գրած որենքն ու կարգը լինի:

III.

ԴԱՍԵՐԻՑ ՀԵՏՈ ՄԻՇԸ ԱՅՍԵԼ ԵՅԻՆ ՃԱՎԱՔՎՈՒՄ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

Ղափլանը կռացած՝ ձեռները մեջքին սպասում եր: Մայանեն մի ամբողջ կապոց զիրք դրեց նրա մեջքին:

Դրանք հին զրքեր եյին: Կարդացվում եյին աջից-ձախ և բազմաթիվ կետեր կային նրանց մեջ, վորոնք զրգած եյին տառի գլխին, տառի տակ, տառի կողքին: Ով ուզում եր թուրքերեն հին զրքերը կարդար, նա պետք ե հիշեր բոլոր այդ կետերը:

Այժմ այդ զրքերը սայլով ընդմիշտ տարան ընթերցարանից: Իսկ այդ կետերով ու զծերով լի զրքերի փոխարեն՝ դարակներում արդեն դարսված են նոր զրքեր: Սրանք կարդացվում են ձախից-աջ, ինչպես բոլոր զրքերն առհասարակ, և զրգած են սովորական տառերով, վոր կոչվում են «լատինական զրքեր»:

Մանափն ասում եր Կուլիզաղեյին:

— Հիմա ինչպես անենք: Վո՞չ վո՞ չի ուզում ընթերցարան գալ: Մահմեդն ասում ե. «Ճանձրալի յե»: Սայիդն ասում ե. «հայրս չի թողնում»: Ամեն մեկը մի բան և ասում:

— Կգան, այ կտեսնես՝ կգան — ծիծաղում եր Կուլիզաղեն:—Միայն պետք ե այսպիս անել, վոր հետաքրքրվեն:

Ղափլանը տարավ վերջին կապոցը: Նա շապկի թեով սրբեց ճակատի քրտինքը և պպկեց, ինչպես իսկական բեռնակերը՝ կայարանում:

— Յես զիտեմ, թե ինչ պիտի անել — ասաց Մայանեն, — Պետք ե գնալ ու յերեխաներին զրքեր ցույց տալ: Այդ գեպում նրանք անշուշտ կգան:


— Դատարկ բան ե, — մրթմրթաց Մանափը: — Ի՞նչ ես հիմար, հիմար խոսում:

Մայանեն բարկացավ, բայց վոչինչ չասաց: Բոլորը լուռ եյին: Հանկարծ Կուլիզաղեն ասում ե.

— Յես ել այդպես եմ կարծում:

— Ինչպես — հարցրեց Մանափը:

— Պիտի զրքեր ցույց տանք:



Յեկ հենց այդպես ել արեցին:

Առջևից Ղափլանն եր գնում: Նա տաճում եր մի յերկու ձող, վորի ծալրին՝ զբոշի փոխարեն ծածանվում եր հսկայական կարտոններ մի գիրք՝ կարմիր, կանաչ դեղին թերթերով: Ղափլանի յետերից Մանասը տաճում եր մի վասդեղին պլակատ, վորի վրա զրված եր. «Յեկեք ընթերցարան»: Մանաֆի յետերից գնում եր կուլիզագեն՝ զըքերով մի մի մեծ պայուսակ դրած թեի տակ: Կուլիզագեյի յետերից՝ Մայանեն մի պլակատ ձեռին, վորի վրա նկարված եյին յերեխաներ և զըքեր:

Նեղիկ փողոցով նրանք բարձրանում եյին դեպի վեր, դեպի քաղաքի ծայրը: Արևն այրում եր: Բորիկ վոտների տակ ճոճոռում եր շիկացած ափազը: Տներից դուրս եյին գալիս կանայք և փոքր յերեխաներ: Կանայք ձեռքով պաշտպանում եյին աշքերն արեից, փաթաթվում իրենց ծածկոցներով, իրար հետ խոսում և որորում եյին զլուխները:

— Այ, այ, Մայանեն: Նայեք, նայեք: Այ քեզ անամոթ աղջիկ: Սա ել Ասլանով Մանաֆն ե:

Կտուրներից նայում եյին պառավները: Ասենք, նրանք իսկի չեյին ել նայում, վորովհետև յերեխները բոլորովին ծածկում եյին, վոր չտեսնեյին այդ խայտառակությունը:

Դրա փոխարեն փոքրիկ տղաները՝ վոտարոբիկ, մի շապկով և մեծ, վոչսարի փափախով, իսկ փոքրիկ աղջիկները՝ յերկար, մինչև կրունկները համառող զգեստներով, վազում եյին պլակատների յետերից: Ընկնելով ու վեր կենալով,

նրանք առաջ եյին վազում, վորպեսզի կարողանան տեսնել հսկայական գիրքը:

Այսան ել եր վազում Զփլաղին շալակած, բայց մեծ դժվարությամբ եր առաջ շարժվում:

Ղափլանը շատ արագ եր գնում: Նա շատ լավ գիտեր, թե ուր պիտի գնար: Ահա վերջին տունը: Տան յետեր կային քարերի կույտեր, ափազի կույտեր, վոչ մի ծառ, իսկ աղբ՝ ինչքան ասես: Իսկ մի քիչ հեռու մոխրագույն, շիկացած քարերն ու ափազը համնում են մինչև մոխրագույն քարաժայուերը:

Այստեղից վոչ ճովն ե յերեսում, վոչ քաղաքը, վոչ տրամվայի զընդոցն ե լսվում, վոչ նույնիսկ նավի սուլոցները: Դասերից հետո միշտ այստեղ են հավաքվում յերեխաները, համարյա թե միշտ, միայն տղաները: Յերբեմն միայն գալիս են այստեղ աղջիկները և Մայանեն ել նրանց հետ:

Ղափլանը շատ վստահ եր քայլում, բայց հանկարծ նականք առավ այդ դատարկ տարածության մեջտեղը: Ո՞ւր են տղերքը: Ղափլանն իր ձեռքի ձողը խրեց ափազի մեջ: Կուլիզագեն նստեց քարերին: Փոքրիկ աղջիկներն ու տղաները շրջապատեցին նրանց: Նրանք շատ լավ եյին ճանաչում թե Մանաֆին, թե Ղափլանին և թե Մայանեյին, վորովհետև նրանք բոլորն ել նույն փողոցի վրա եյին ապրում: Սակայն հիմա, յերբ նրանք այսպիսի գեղեցիկ բա-

ներ եյին բերել, և նրանց հետ ինչ-վոր մի ոտար մարդկար, յերեխաները կարծես թե նույնիսկ լավ չեյին ճանաշում նրանց:

— Ես ինչ ե փայտի վրա,—հարցրեց մի փոքրիկ թուխ աղջիկ:

Բայց Մայանեն ժամանակ չունեցավ նրան պատասխանելու:

— Հրեն նրանք,—գոչեց Ղափլանը:—Այ, քարերի յետին են:

Յեվ Ղափլանը վեր թռավ տեղից, դուրս քաշեց ավազից իր ձողը և վազեց:

— Եյ, տղերք: Յեկեք, յեկեք եստեղ, շնոր:

Կարելի յեր կարծել, թե յերեխաները չլսեցին Ղափլանի ձայնը: Նրանք բոլորը պպղած՝ մի շրջան եյին կադմել և մեծ ուշադրությամբ նայում եյին դեպի շրջանի մեջտեղը: Ղափլանը դա մի շատ հետաքրքրական բան եր: Նրանցից վոչ մեկը նույնիսկ չնայեց Ղափլանի կողմը:

— Եյ, տղերք,—մի անգամ ել կանչեց Ղափլանը: Ապա հանկարծ նա ձողը խրեց ավազի մեջ և մի վոստյունով ինքն ել հասավ շրջանին:

Բայց դեռ Ղափլանը չեր պպղել, վոր նրա կողքին պպղած տղան արագ բոնեց առնետի պոչից (դա մի սովորական առնետ եր, կիսակենդան դրության մեջ) և արշավեց ուղղակի կուլիզադեյի ու Մանաֆի վրա: Դիտմամբ չարեց, իհարկե: Նա իսկի նրանց չնկատեց ել: Իսկ նրա յետեկից՝ ճշալով, դոփելով ու գոռգոռալով վազեցին տղաները, բորբկ վոտներով բարձրացնելով փոշին և մանք քարերը դես ու դեն ցրելով: Գուցե նրանցից մեկն ու մեկը տեսավ ել մեծ, նախշուն զիրքը, գեղին պլակատն ու կուլիզադեյի ոտար գեմքը, բայց այդ բոլորը մի վայրկյան միայն յերեաց ու իսկույն չքացավ:

Տղաների հետ Ղափլանն ել եր վազում:

Մայանեն ինչ վոր ճշաց ու վազեց նրանց յետեկց, պլակատը ձեռից բաց չթողնելով: Բայց ել նրանց կհասնես: Նա կանդ առավ:

— Ղափլան, Ղափլան:

Իսկ Ղափլանը բոլորովին մոռացավ իր նախշուն գիրքը: Այ, քամին խառնում ե նրա թերթերը: Ահա մոտեցավ Այ-

նան. Զփլաղը պարզել ե թաթիկները, ուզում ե բոնել մի թերթը, իսկ քամին խլում ե նրա ձեռքից:

— Առայժմ շատ անհաջող ե գնում գործը, — ասաց կուլիզադեն: — Դեհ, սպասենք, նրանք շուտով կվերադառնան:

— Վանց չե, կվերադառնան — ասաց Մանաֆը, — նրանք հիմա վազեցին դեպի ծովը, պիտի առնետին ջրում խեղդեն: Մանաֆն այնպես տիսուր եր խոսում, վոր կարծես նա ափսոսում եր, վոր ինքը մնացել եր այդտեղ՝ դեղին պլակատը ձեռքին, և վոչ թե տղաների հետ միասին՝ վազել դեպի ծովը: Գուցե ճիշտ վոր նա ափսոսում եր: Գոնե մի փոքր: Չե վոր կարող ե պատահել:

VI.

ԵՍ Ի՞ՆՉ ԲԱՆ Ե, ՄՆՎԵԼ ՄՈԼԼԱՅԻ ԽԱՍՏՈՒԹՅԱՌՄ



Մոլլան ծալապատիկ նստած եր հատակին՝ բարձերի վրա: Զեյնարն անվստահ կանգ առավ շեմքին, Զփլաղը բորբկի, մի շապկով, վոչեարի փափախով, նստած եր նրա թերին: Կողքին կանգնուծ եր Այնան: Յերկար զգեստի տակից դուրս եյին ցցված նրա փոքրիկ, կեղտոտ վոտները: Մի ձեռքով նա իր ծածկոցն եր առ մեկ կզակի տակ, իսկ մյուս ձեռքով ամուր բոնել առ մեկ կզակի տակ, մի քէչ վախենում եր:



Այնան հաճախ եր լսել, թե մոլլան ամենախելոք ու ամենանշանագոր մարդն ե ամբողջ աշխարհում, վոր այդ պատճառով նա կարծում եր, թե պետք ե տեսնի մի ինչ-վոր սարսափելի մարդու, վորն, ով գիտի, հանկարծ կը ունի իրեն, կամ կզուա ու վոտները կիսվի գետնին, կամ վորնե տարորինակ բան կանի, ինչպես յերեմն տեսնում ենք յերազում: Իսկ այստեղ նա հանկարծ տեսնում ե՝ նստած ե մի փոքրիկ, սովորական ծերուկ, հինայած մորուքով, գլխին չալմա դրած, և նրա առաջ՝ սկուտեղու վրա դրված են զանազան համեղ բաներ:

— Ինչո՞ւ յես յեկել, այ կնիկ,— հարցը եց մոլլան այն-պիսի մեղմ ձայնով, վոր Այնան նույնիսկ մի քիչ ժպտաց ինքն իրեն: Զեյնարը մի փոքր մոտեցափ:

— Այ, ես տղաս, Զփլաղը, տենդում ե անցյալ գիշեր-վանից:

Զփլաղը լսեց իր անունը:

— Ուզում եմ ման գալ: Թող, դադա, վայ, թող, — հեծկտաց նա:

Մայրն զգույշ կանգնեցրեց նրան գետնին: Զփլաղն որորվեց, փուեց հատակին, չոեց ծուռտիկ բոքիկ վոտները և բարձր ձայնով լաց յեղափ:

Այնան վագեց նրա մոտ, պազեց կողքին և սկսեց շշըն-ջալով ինչ-վոր բան ասել նրան: Նա ծոցից հանեց կոն-ֆետը, շուռ ու մուռ տվեց, նայեց վրան և ապա սկսեց շտապով բաց անել թուղթը: Հո չի կարելի մոլլայի տանը գոռալ, յեթե նույնիսկ մոլլան սարսափելի լինի:

— Հետո, այ ես աղջիկը: Վժնց անեմ: Հայրն ասում ե, թե պիտի խորհրդային դպրոց ուղարկել: Իսկ ինչ կասի Ֆաթմա-տատիկը: Խորհուրդ տուր, վողորմած մոլլա, իսկ յես քո լավության տակից դուրս կդամ—պարտք չեմ մնաւ:

Մոլլան կարմիր չթի թաշկինակով սրբեց մորուքն ու ասաց:

— Ամեն մարդու՝ իր դարդն ուղտի պես մեծ ե թվում: Քո դարդը մեծ չի, թանգ չի լինի:

Այնան կոնֆենտը կիսեց:

— Ես-քեզ, ես-ինձ: Իսկ ես թուղթը յես Զփլաղին կտամ, յեթե նա ձայնը կտրի: Զփլաղը խելոք ե: Զփլաղը վոր մեծանա, յես մի եղ կառնեմ նրա համար, — մըթմը-

թում եր Այնան, իսկ ինքը ականջները սրած՝ լսում եր մորը և ասլա մոլլային:

Մոլլան լուց, Զեյնարն ել լուռ եր: Նա չեր համար-ձակվում խոսել: Մպասում եր, թե ել ինչ կասի մոլլան:

Գալլերեյի գույնզգույն ապակիներից ներս եյին թա-փանցում արեի նախշուն ճառագայթները—դեղին, կանաչ, կարմիր: Նրանք շողջողում եյին առաստաղի վրա, ապակի-ների վրա, մոլլայի հինայած մորուքի վրա, Զեյնարի զգեստի վրա և պատերին կախ տված՝ սոխի վնջերի վրա:

Մոլլան ասաց:

— Դեհ, ինչ արած, աղջիկը թող ինձ մոտ հաճախի: Յես նրան թույլ կտամ, վոր իր ծարավը հագեցնի իմ իմաստության աղբյուրից: Յես այդ չեմ խնայի նրանից, չնայած, վոր ինձ մոտ ավելի նշանավոր մարդկանց յերե-խաներն են սովորում: Տղաներն ու աղջիկները միասին են սովորում ինձ մոտ: Թող չասես, թե մոլլան հետամնաց մարդ ե: Մոլլան խորհրդային իշխանությունն ընդունում ե, բայց միայն խորհրդային իշխանությունը չի ուզում ըն-դունել մոլլային: Ինքն իր ոգուտը չի հասկանում:

Մոլլան բարկացափ:

— Ինչո՞վ յես իմ շնորհակալությունը հայտնեմ քեզ, վողորմած մոլլա: Մենք չքավոր մարդիկ ենք:

— Յեթե մորուք չունեցողին յօւրաքանչյուրը մի մազ տա, կստացփի մի ամբողջ մորուք: Այդպես ել ձեր մոլլան: Ամեն մեկը յեթե մի փոքր բան բերի—մոլլան կուշտ կլինի, իսկ ձեր յերեխաներն ել կապրեն առանց մեղք գործելու:

— Մնաս բարավ, մոլլա: Դու խաղաղություն տվիր իմ հոգուն: Թող քո իմաստուն աչքերը դեռ յերկար տարիներ շարունակ նայեն լուսնին ու արեին:

Զեյնարը, Զփլաղն ու Այնան վերադառնում եյին տուն: Դեռ հեռվից նրանք լսեցին Ֆաթմա տատիկի ձայնը.

— Այ ոճի փուշ մնա բկիդ: Եստեղ իմ թան եր դրված, իսկ հիմա քոնն ե դրված: Իսչո՞ւ չես հարգում ծերերին: Ինչո՞ւ չես պատվում ծերերին:

Ֆաթմա տատիկը կանգնած եր ջրհորի մոտ՝ առանց ծածկոցի, մազերը գգգված, և լայն զգեստով: Նա ձեռ-ները թափահարում եր ու ճշում: Իսկ ջրհորի մյուս կող-մում կանգնած եր հաստլիկ, կարմիր կալան և նույնպես

թափահարում եր ձեռներն ու ճշում, բայց վոչ այնքան
բարձր—նա շատ եր շոգում:

— Ինչու պիտի յես իմ թասը քոնի տեղը դնեմ: Հո
յես այնքան չեմ քավթառել, վոր խելքս կորցնեմ:

— Իսկ ի՞նը ես դու խելք ունեցել: Աղջկանդ դպրոց
ես դրկել: Դու ել շուտով առանց չադրայի բաղաք կվա-
զես: Ի՞նչ ես արել իմ թասը:

— Յես գիտեմ, յես գիտեմ վորտեղ և թասը,— գոչեց
Այնան: Հիմա իսկույն կը երեմ:

Այնան վազեց տուն և մի վայրկյանում յետ դարձավ
ֆաթմա տատիկի մոտ:

— Հրես քո թասը, ֆաթմա տատիկ: Դու ինքդ սրա
մեջ յեղունգներդ եյիր հինայում:

— Քեզ հարցնող կա,— քաշեց ֆաթմա տատիկը Այ-
նայի հյուսերը:— Քեզ հարցնող կա: Հա, յեղունգներս եյի
հինայում: Հո յես չեմ ասում, թե չեմ ներկել:

Ֆաթմա տատիկը վերցրեց թասը, լուռ յետ բաշեց Լա-
լայի թասը և իր թասը զրեց նրա տեղը: Ապա նա նստեց
հենց այդտեղ— վորդիկ գորդի վրա, ծոցից հանեց ուլուն-
քազարդ կեղտոտ քսակը, վերցրեց մի պալունց քթախոտ
և քթածակերը լցրեց: Լալան ել իր տեղը նստեց՝ ջրհորի
մյուս կողմը:

Այնան ֆաթմա տատիկի համար բերեց տաք-տաք
սրճամանը, սկսուազով բաժակները և մի ափսե լիքը մանր
կտրտած հալիւ:

— Համեցիր ինձ մոտ, Լալա, մի բաժակ սուրճ խմիլ, —
բոլորովին հանգիստ ասաց ֆաթմա տատիկը:

Լալան ել գիտեր, վոր հաշտությունն արդեն կնքված ե:

— Քո բարությունն այնքան մեծ ե, վոր յեթե հավը
կաթ տար, յես ուրախությամբ քեզ համար հավի պանիր
կճարեյի, — ասաց նա:

Ֆաթմա տատիկը մի կողմ քաշվելով՝ տեղ բացեց գորդի
վրա:

— Նստիր:

Լալան ձեռքի ափով բերանը սբեց, հավաքեց իր նախ-
շուն փեշերը և նստեց:

— Հալիւ սիրանմ ես, — հարցրեց ֆաթմա տատիկը:

— Սիրում եմ:

— Կեր, քեզ անոնց լինի: Հաստացիր:

— Շնորհակալ եմ, ֆաթմա տատիկ:

Զեյնաբը, Զփլաղին գրկած, յեկավ ջրհորի մոտ: Նա
հանեց ծածկոցը, կոֆտայի կոճակներն արձակեց ու նստեց
ֆաթմայի կողքին: Նրա գեմքը գոհունակություն եր ար-
տահայտում: Այտերի վրայով կախված եյին ձիգ հյուսված
նոսր մազերը: Նա պատմում եր մոլայի մասին: Այժմ
նրան թվում եր, թե մոլան առանձնապես սիրալիր ըն-
դունեց իրան, թե նա առանձնապես քնքույշ ու նշանակա-
լից խոսքեր ասաց իրեն:

— Ո, ինչքան հոգատար և մեր մոլան: Ամբողջ դարձ
ցըց: Թող Այնան ինձ մոտ գա, — ասում ե, — թող ինձ
մոտ սովորի: Հիմա, ասում ե, ժամանակն եղան ե — բո-
լորը պիտի սովորեն:

Ֆաթմա տատիկը նայեց Լալային:

Լալան վերցրեց մի փոքրիկ կտոր հալվա: Նա, կարծես,
չեր լսում, թե Զեյնաբն ինչ ե ասում: Գուցե նա ուղղակի
չեր ուզում լսել, վորովինետև նա՝ Լալան, Մայանեյի մայրն
եր, իսկ Մայանեն արդեն խորհրդային դպրոց եր գնում:

Այնան պազել եր մոր կողքին, թեյափսեյից խմում եր
ջրալի սուրճը, վոր այրում եր նրա բերանը, և մտածում
եր. «Հրես հիմա գնալու յեմ մոլայի մոտ: Ես ի՞նչ բան
ե, — մոլայի իմաստությամբ սնվել: Նման ե արդյոք Մա-
նափի դասերին: Յեթե նման ե, գուցե լավ ե»:

V.

ԱՎ ՎՈՉ ԹԵ ԱՂՋԻԿ Ե, ԱՅԼ ԽԿԱԿԱՆ ԳԱՆՁ

Այնան նստել եր ֆաթմա տատիկի կողքին ու բուրդ
եր քըքրում: Ֆաթմա տատիկը խոսում եր միալար, միտ-
պաղաղ ձայնով, ինչպես ժամացույցն ե ձկճկում:

— Յեթե աղջիկը բուրդ ե քըքրում, նա պիտի իր
հյուսի ծայրը բերանում պահի: Դու վեց հյուս ունես:
Նրանցից ամենայերկարն առ բերանդ:

Այնան հնազանդ կերպով կատարեց ֆաթմա տատիկը
խոսքը: Նրա կողքին պառկած եր Զփլաղը: Նա դեռ ելի
հիվանդ եր:

— Այնա, այ Այնա,—տնքում եր Զփլաղը, — գառնուկ
եմ ուզում: Ինձ գառնուկ տուր, Այնա:

Իսկ Թաթմա տատիկը կարծես խոսքերը մուրճով ե
խփում.

— Թե ուզտի պոչը կերկարի — դու ել կխելոքանաս:
Լուս կաց, յերբ աշխատում ես, և աչքերդ միշտ ցած խո-
նարհիր:

— Գառնուկ տուր, Այնա...

Այնան չգիտի, թե ում լսի: Յեվ բացի դրանից՝ այնքան
տհամ ե հյուսի ծայրը բերանում պահելը: Յեվ այդ հիմար
Զփլաղը ինքը քանդեց իր խաղալիք-ուլիկը, իսկ հիմա ել
գառնուկ ե ուզում: Վորտեղից յես նրան գառնուկ տամ:

— Միթե չես լսում, վոր յերեխան լաց ե լինում:
Վերցրն, ձայնը կտրիր:

Այնան բերանից դուրս թքեց հյուսի ծայրը: Փառք ալ-
լահին, հիմա կարելի յե մի քիչ խոսել:

— Ոյ, Զփլաղ ջան, — ուրախացած ասա Այնան, — յես
հիմա իսկույն գառնուկ կճարեմ քեզ համար:


Այնան մի կտոր բուրդ վերցրեց, փաթաթեց ձեռքի վրա
և մոտեցրեց ուղղակի Զփլաղի քթին. Զփլաղը յերկու թա-
թիկներով ամուր բռնեց գառնուկը և ժալտաց:

— Այնա, Այնա, նորից կուշանաս, մոլլայի մոտ շտա-
պիր, — հանկարծ լսեց Այնան մոր ձայնը:

Այնան առաջին անգամը չի, վոր մոլլայի մոտ ե գնում:
Նա արդեն ել չի վախենում նրանից: Յեվ նա արդեն շատ
լավ գիտի, վոր մոլլայի «իմաստությամբ սնվելը» շատ
ձանձրալի բան ե: Դա նշանակում ե պազել գետնին և
մյուս տղաների ու աղջիկների հետ միասին՝ ամբողջ ձայ-
նով գոռալ տառերը: Այսոր տառեր, վաղը տառեր, և դեռ
յերկար ժամանակ, գուցե մինչև բոլորովին մեծանալը՝ միշտ
տառերը պիտի կարդա: Իսկ հետո միշտ մոլլան ասում ե.

— Բերաններդ լիքը ջուր լցրեք և լուս կացեք այն
մասին, ինչ վոր դուք տեսնում եք այստեղ:

Մայրն ել ե ստիպում, վոր լուի: Թող վնչ վոր չիմա-
նա — վնչ հայրը, վնչ նույնիսկ Մանաֆը: Չնայած, Մանա-
ֆը, իհարկե, գիտի, բայց Այնան աղջիկ ե, իսկ Մանաֆը
բոլորովին հավաս չունի վնչ աղջկա մասին մտածելու և
վնչ ել նրա գործերում խառնվելու:



Բացի գրանից, Այնան դեռ բոլորովին փոքրիկ աղջիկ
ե, և Մայանեյի նման չի:

Մեկ ել մի անգամ մոլլան ասել ե. «Շատախոսները
քար կղանան»: Այնքան ել դուրեկան բան չի քար դառ-
նալը, մանավանդ, վոր քարերին մուրճով խփում են քար-
տահները. այ, որինակ իր հայրը:

Մայրն իր ձեռքով գցում ե Այնայի ծածկոցը և խստ-
ըեն ասում:

— Դես ու դեն չնայես: Թամաշա չանես: Վնչ վոքի
հետ չխոսես:

— Լավ, դադա, — ասում ե Այնան և դանդաղ անցնում
բակով:

Մայրը նայում ե նրա յետելից:

— Սա վոչ թե աղջիկ ե, այլ իսկական գանձ: Լավ յե-
րեխաներ ե տվել ինձ ալլահը, — շշնջում ե նա:

Այնան դարպասից դուրս յեկավ:

Սկզբում Այնան նույնպես դանդաղ եր գնում, ինչպես
բակում: Նա դես ու դեն չեր նայում: Նա վնչ վոքի չեր
նայում և, իհարկե, վնչ վոքի հետ չեր խոսում: Այդպես
Այնան անցավ ամբողջ փողոցը: Փողոցի անկյունում նըս-
տած եր զրագիրը — միրզան: Այնան արդեն ճանաչում ե
նրան: Նա կամացուկ ասում ե, իհարկե ինքն իրեն, վնչ
թե միրդային:

— Բարեկ, միրզա:


Յեվ Այնան մի փոքր այն կողմն ե նայում, վորովհետեւ
միրզան այն կողմն ե նատած, և մի քիչ ել ժպտում ե,
վորովհետեւ միրզան սիրալիր գլուխ ե տալիս նրան: Մի

Քիչ հետո նա կհամնի ընթերցարանի ցուցանակին, վորը
Մանաֆն ե գրել: Ամեն անդամ, յերբ Այնան անցնում ե
ցուցանակի մոտից, լսում ե ներսից յեկող ձայները: Յեր-
բեմն նրան թվում ե, թե լսում ե Մանաֆի ձայնը: Բայց
գուցե Մայանեն ե այդպես գոռում: Դե, ի՞նչ կա վոր, թող
գոռա: Իսկ Կուլիզադեն վատ մարդ ե, նրա գլուխը լիքն ե
գրքերով, իսկ գրպանը դատարկ ե: Այդպես ե ասում
Ֆաթմա տատիկը: Սակայն, մի տեսակ տհաճ ե անցնել
այդ ցուցանակի մոտից: Ի՞նչ են անում նրանք այնտեղ,
ինչու յեն ծիծաղում:

Այնան արագացնում ե քայլերը:

Թող ծիծաղեն: Նա ևս ծիծաղում ե փոքրիկ Լալայի
հետ, յերբ նրանք միասին վերադառնում են մոլլայի մո-
տից: Յերբ Այնան առաջին անգամ յեկավ մոլլայի մոտ,
Լալան հարցրեց նրան: «Ուզում ես ինձ հետ ընկերանալ». Այնան, իհարկե, ուզում եր: Այն ժամանակ Լալան ասաց.
«Դու կինես իմ փոքրիկ, նոր ընկերուհին»:

Անցնելով ընթերցարանի մոտից, Այնան ինքն ել չգի-
տեր, թե ինչու, միշտ հիշում եր Լալային: Յեկ անա հիմա
ել հիշեց, ծիծաղեց, վրայից բոլորովին վերցրեց ծածկոցը
և ձեռքին ծածանելով՝ փողոցով վազեց դեպի վեր:



VI.

ՄԵԶ ԱՈՏ ԱՎՎԱՐԻՈՒՄ ԿԱ

Այնան հաշվում եր.

Խալդի դեղի,
Խուլդի դեղի,
Սան չիր դեղի,
Սան չիր դեղի:

— Հիմա գու յես, Գյուլիզար, հիմա քո հերթն ե, —
բղավեցին յերեխաները:

Այնան վագեց դեպի ջրհորը: Ջրհորի մոտ ահագին
բուրդ եր գիզված, իսկ Ֆաթմա տատիկը տուն եր գնա-
ցել: Այնան մի վայրկյան մտածեց, ապա շտապով բարձ-
րացրեց բուրդը և մտնելով բրդի տակ՝ վոտով գլխով ծածկ-
վեց: Բուրդը լցվեց նրա ականջները, ոճիքը: Այնան ուրախ
ժամանաց: Վոչ մեկը յերեք գլխի չի ընկնի, վոր Այնան հա-
մարձակվել ե Ֆաթմա տատիկի բրդի մեջ թագնվել: Վայ,
ինչպես ե բուրդը խտուտ տալիս նրա քիթը: Յեկ հան-
կարծ Այնան ուղիղ իր գլխավերել լսեց Ֆաթմա տատիկի
ձայնը:

— Ալլահ, ալլահ, սա բակ հո չի, ուղղակի Մահմեդի
դժոխքն ե, վորտեղ անհավատներն են վազվում:

«Յերեկի Ֆաթմա տատիկը նստեց, — մտածեց Այնան: —
ինչքան մոտիկ ե: Հրես նա մի քիչ առաջ կշրժվի և ուղ-
ուակի կնսակի գլխիս»:

— Այնա, — կանչում ե Գյուլիզարը: — Ճայն հանիր:

Տանը Զփլաղը լաց յեղավ: Բայց գուցե դա Զփլաղը չի:
Գուցե դա վորմե ուրիշ յերեխա յե: Զե վոր այդ տանը
շատ մարդ ե ապօռմ: Վայ, չե, դա Զփլաղի ձայնն ե:
Հիմա նա կկանչի. «Այնա, այ Այնա»:

— Դա աղջիկ հո չի, իսկական սատանի ճուտ ե: Ուր
կորավ, — փնթիկնթաց Ֆաթման:

— Եյ, Այնա, ոյ, Այնա: Բա դու չես լսում, վոր յե-
րեխան լաց ե լինում:

Ի՞նչ անել. դմւրս գալ, թե ելի պառկել: Զե վոր Ֆաթմա
տատիկն ել չի գնա հիմա: Նա կնսակի այստեղ մինչև յե-
ցեկո: Իսկ մինչև յերեկո դեռ շատ ժամանակ կա: Մինչեւ

յերեկո Այնան կիսեղդվի այստեղ։ Այնան կիսեղդվի ու բոլորը կզարմանան։ Վայ, ինչ վատ բան է խեղդվելը։ Վայ, ինչ շոգ ե։ Ինչ անհարմար է այստեղ պառկեր։

Յեվ Այնան հանկարծ վեր թռավ տեղից։

— Տեսեք, հրես Այնան, — ճշաց Գյուլիկարը։

Այնան նայում եր ֆաթմա տատիկին, իսկ ֆաթմա տատիկը նայում եր Այնային։ Ապա ֆաթմա տատիկը վեր կացավ տեղից, ձեռքը մեկնեց և բրդի ճիպոտը վերցրեց։

Բայց Այնան արդեն փախչում եր դեպի տուն։ Իսկ ճառ նապարհին թափ եր տալիս՝ շորերին, մազերին ու ձեռներին կպած բուրդը։

— Ո՞ւր ես գնում, Այնա, քո հերթն ե, — կանչում եյին յերեխաները։

— Ինչպես խաղամ, Զփլաղը լաց ել լինում։ Զեք լսում, ինչ ե, — վաղելով ասաց Այնան։ Հրեն, տեսէք, Մանաֆը գալիս ե։

Մանաֆն ու Ղափլանը կանգնեցին դարպասի առաջ։ Բայց նրանք բոլորվին չեյին պատրաստվում խաղալու։

— Դու ասում ես — Այնան։ Բայց նա շատ փոքր ե, ինչ և հասկանում վոր, — ասում եր Մանաֆը։

— Ո՛յ, ինչ ես ասում, Այնան շատ աշխույժ ե։

Իսկ Այնան այդ ժամանակ նստած եր հատակին։ Զըփլաղի կողքին նա բերանը լայն բացած ժպտում եր, նրա փոքրիկ հյուսերը դզգվել եյին։ Նա մտածում եր։ «Ինչպես վախեցավ ֆաթմա տատիկը, ե»։

— Սուս կաց, Զփլաղ։ Տեսնում ես՝ Այնան յեկել ե։ Շուտով դադան կդա կոռպերատիվից։ Տես, հիմա Այնան կթագնվի, Փնտոիր Այնային։

Բայց Զփլաղը չեր ուզում վնասուել։ Նա հեծկլտում եր։ Նա դեռ չեր առողջացել։ Շատ եր լաց լինում և խիստ հաղում եր։

— Գնանք ման գալու, Զփլաղ։

— Գնանք, — համաձայնվեց Զփլաղը։

Այնան շալակեց Զփլաղին, իսկ նա ամուր փաթաթվեց Այնայի վզին։ Այնան յետեկց բռնեց նրա վոտները։

Բակով պիտի այնպես անցնել, վոր ֆաթմա տատիկը չնկատի։ Այնան գլուխն զգույշ գուրս հանեց դռնից, նայեց և հանկարծ վազեց դեպի դարպասը։ Ֆաթմա տատիկը

փոչինչ չեր տեսնում։ Աղբի արկղի մոտ Այնան նստեց և Զփլաղի հետ սկսեցին դեպի փողոց նայել։

— Տես իշուկը վագում ե։ Տես ծերուկը գալիս ե։ Յեթե Զփլաղը ձայնը չկտրի, ծերուկը նրան իր պարկի մեջ կգցի։

— Եյ, Այնա, — կանչեց Մանաֆը։ Դու ինչ ես անում։ Սովորաբար նա քիչ եր խոսում Այնայի հետ։ Փոքր աղջիկ ե, այն ել իրա քույրը։

«Ինչու յե Մանաֆն ինձ կանչում։ — մտածեց Այնան։ — Գուցե վորեե բան ե պատահել»։

Մանաֆը վճռական յեղանակով ասաց։

— Կուզես ակախվի մեջ մտնել։

— Ի՞նչ, — չհասկացավ Այնան։

— Ակախվի մեջ, — կը կնեց Ղափլանը։

— Դա ինչ բան ե։

— Դե, ակախվ ելի։ Միթե չգիտես՝ ակախվ ինչ ե։

— Տես քեզ ասում եյի, վոր նա չի կարող, — լըջորեն ասաց Մանաֆը։

— Ընթերցարան կգամա։ Կուլիզադեյի մոտ — են գրադարանապետի։

— Վահ, չեմ ուզում։ Յես հիմա մոլլայի մոտ եմ գնում։ Լալան ենտեղ ե։

— Թող լալան ել գա։

— Ո՛յ, լալան չի գա։ Նրա մայրը շատ խիստ ե։ Մայրը չի թողնի։

— Իսկ դու կարծում ես, թե քեզ մայրիկը կթողնի, — ծիծաղեց Մանաֆը։ Յես տղա յեմ ինձ ամեն տեղ թողնում են, իսկ քեզ յերբեք չեն թողնի։

— Բա ինչպես ես ասում՝ արի։

— Հենց ենպես, վեր կաց արի, ուղղակի։

Մանաֆը չեր ուզում ասել, թե մայրիկին մի լսիր, մայրիկին այդ մասին մի ասի։ Նա մի քիչ լոեց, ապա ասաց։

— Մեզ մոտ ակվարիում կա։

— Ի՞նչ։

— Ակվարիում ելի, — ասաց Ղափլանը։

«Դա ինչ բան ե» մտածեց Այնան, բայց ասաց։

— Իսկ մեզ մոտ մոլլան ամեն որ վլագ ե ուսում։

Ղափլանը ծիծաղեց։

— Իսկ քեզ ի՞նչ ոգուտ դրանից, վոր մոլան ամեն որ փլափ ե ուտում:

Այնան մի քիչ մտածեց ու ապա ասաց.


— Մենք նայում ենք—յես ու լալան, վրովհետև, ինչպես մոլան ե ասում, սենք ախորժակ ունենք:

VII.

ԲԱՐՁՐԱՅԻՐ ՍԱՆԴՈՒԽՈՎ— ՅԵՎ ՄԵԶ ԿԱՍՆԵՍ

Անցավ մի քանի որ: Նորից Այնան անցնում եր ընթերցարանի մոտից: Նա մտածում եր, «Վորն ե ավելի լավը, ախորժակը, թէ ակվարիումը: Յեվ ի՞նչ ե ակվարիումը: Նա ինչի՞ն ման ե»:

— Եյ, Այնա, — հանկարծ մի ձայլ լսեց նա: — Եյ, Այնա, արի եստեղ:



Այնան բարձրացրեց դլուխը: Ուղիղ իր գլխավերեը պատուհանից կախ եր ընկած Մանաֆի գլուխը:

— Արի եստեղ, Այնա! Անցիր մեզ մոտ:

— Յեվ դեռ Այնան յետ չեր նայել, յերբ ինքը Մանաֆը և նրա յետեից ել Ղափլանը՝ մայկաներով ու կապույտ տրուիկներով՝ արդեն կանգնեցին նրա կողքին:

— Գնանք, տես ակվարիումը, — ասաց Ղափլանը:

Այնան կանգ առավ:

— Ակվարիումը: Իսկ մոլան: Յես մոլայի մոտ եմ գնում:

— Մոլայի մոտն ել հետո կգնաս: Կնայես ու կգնաս, — ասաց Մանաֆը:

Իսկ պատուհանից յերևաց արդեն յերբորդ գլուխը — Մայանեն եր:

— Դա Այնան ե: Արի, արի մեզ մոտ, Այնա: Դժվար հո չի, բարձրացիր սանդուխքով — և մեզ կհամնես:

«Ճիշտ ե, դժվար չի» մտածեց Այնան և ծածկոցի մեջ փաթաթվելով՝ զնաց Մանաֆի յետեից: Նախ բարձրացավ սանդուխքով, ապա անցավ փոքրիկ նախասենյակով և մտավ ընթերցարան: Ընթերցարանում դրված եր մոմաշորով ծածկ-ված մի յերկար սեղան, իսկ պատի տակ՝ գրքերով լի մի գարակ: Սեղանի մոտ նստած՝ մի տղա գիրք եր կարդում: Իսկ Մայանեն արդեն հեռացել եր պատուհանից և զբաղ-ված եր գարակի գրքերով:

— Հրես ընթերցարանը, տեսնում ես, — շշուկով ասաց Ղափլանը: — Տեսնում ես, կարդում ե: Հիմա ուրիշ յերե-խաներ ել կգան:

Այնան չեր լսում: Նա ուզում եր շուտով տեսնել ակ-վարիումը:

— Բա ուր ե ակվարիումը, — նույնպես շշուկով հարց-րեց Այնան:

Մանաֆն անցել եր պատուհանի մոտ:


— Արի եստեղ, տես:

Այնան մոտեցտվ պատուհանին:

— Այս, — հառաչեց նա, — ուրեմն ակվարիումը սա յե-բանկայի մեջ փայլում եյին արեի շողերը և այդ շո-ղերից բոլորովին վոսկեգույն դարձած՝ վիտում եյին ձբկ-նիկները: Այնան նայում եր շացած:

— Ի՞նչ լավ ե:

Մի քանի ըոպեյից հետո՝ Այնան վնչ թե գնում, այլ վազում եր փողոցով: Յերկար զգեստը փաթաթվում եր նրա բորբիկ վոտներին, փոքրիկ հյուսերը թափահարվում եյին քամուց, և նա ժպտում եր ամբողջ իր լախ բերանով: Իսկ ծածկոցը նա բռնել եր ձեռին՝ փաթաթած ու ճմլտած:



— Հիմա բոլորը կպատմեմ Լալային: Վայ, ուշ ե: Դեհ, դեհ, Այնա,—ասում եր նա ինքն իրեն: — Դեհ, Այնա, չուտ, հա, շուտ:

Փողոցի անկյունում Այնայի դիմաց ինչ-վոր մի տղա յեր գալիս, նրա յետելից ել մի ուրիշը: Տղան կտրեց Այնայի ճանապարհը:

— Վորտեղ եյիր,—գոռաց նա և ամուր բռնեց Այնայի թելից: — Վորտեղ եյիր, շուտ պատասխանիր:

— Ռահիմն ե: — Ճանաչեց նրան Այնան: Ռահիմ Ալի-յեֆս ե: Թող, արդեն ուշ ե: Մոլլայի մոտ եմ գնում:

— Մենք բոլորը տեսանք: Ինչու եյիր կուլիզադեյի մոտ գնացեր: Ես բոլեյին կգնամ, մորդ կասեմ:

— Դե լավ, թող, — խնդրում եր Այնան: Ապա հանկարծ շուր յեկավ, գուրս պրծավ Ռահիմի ձեռից և փախավ դեպի:

— Մանափ, Եյ, Մանափ, — ճաց նա:

Մանափը նրա մեծ յեղբայրն ե: Նա պիտի պաշտպանի Այնային:

Մանափը ձեռքից ցած դցեց քարտերով լի արկղիկը և վագեց փողոց:

Մանափը տեսավ Այնային և հետո Ռահիմին: Նա իսկույն հասկացավ, թե բանն ինչումն ե: Նա Այնային թողեց

ու վագեց ուղղակի Ռահիմի վրա: Ռահիմը կանգ առավ և ձեռները գրպանները դրեց: Մյուս տղան ել նույնն արագ: Զե վոր նրանը իսկական պիջակներ և իսկական յերկար վարտիկներ եյին հագած: Թող մի Մանափը փորձի:

Բայց Մանափն այնքան թափով վագեց, վոր նույնիսկ Ռահիմից ել մի քիչ այն կողմ թռավ:

— Դու ի՞նչ ես ուզում, — հարցըրեց Ռահիմը:

— Ինքդ գիտես, թե ինչ, — պատասխանեց Մանափը՝ հարձակման պատրաստվելով:

Ռահիմը ուսերը թոթվեց, արհամարանքով թքեց գետնին և յերեսը դարձրեց Մանափից: Մյուս տղան ել նույնն արեց:

— Ե՛ր, Մանափ, արի եստեղ: Թող, գլուխ մի դնի դրանց հետ, — գոռաց Ղափլանը:

Բայց Մանափն ինչպես ե ուզում կպչել: Ինչպես ե նա ուզում գործի դնել իր բառնցքները: Ինչպես ե նա ցանկանում մի լավ գաս տալ արդ անպիտան Ռահիմին:

Մանափը մի վայրկյան մտածեց: Նրանք յերկուսով են: Ղափլանը հիմա չի կրվի: Մենակ՝ յերկուսին չեմ հաղթի: Խայտառակ կլինեմ:

— Կորեք եստեղից, — գոռաց Մանափը: — Շնուտ, կորեք եստեղից:

— Քանիսով ես առել ես փողոցը, Եյ, դու, գրքերով լցրած գլուխ, — ծիծաղեց Ռահիմը:

— Կորեք եստեղից, — նորից գոռաց Մանափը և հիշեց Այնային: — Ուր ե Այնան:

Բայց Այնան վազուց արդեն մոլլայի տան ճանապարհին եր: Նա արդեն ամեն-ինչ աշխարհում մոռացել եր, թե ընթերցարանի և թե Մանափի մասին: Նա ծածկոցը գցել եր զիմին, ամուր բռնել և վագելով մտածում եր. «Հիմա ինձ ի՞նչ կպատահի: Ի՞նչ կլինի...»

VIII.

ՀԵՌԱՑԻՐ ԱՉԳԻՑՍ, ԱՆՊԻՏԱՆ ԱՂՁԻԿ

Այնան նստած եր իր ներքնակին: Նրա կողքին ընած եր Զփլաղը: Այնան մտածում եր: Նա կնճռոտել եր ճակատը, շրթունքները հավաքել և բարկացած նայում եր մի կետի:

Ապա նա վեր կացավ, մոտեցավ տարածին, վսրտեղ նրանք ցերեկը դարսում եյին ամբողջ անկողինը — բարձերը, նախշուն վերմակները, մութաքանները: Այնան դեռ ու դեն տվեց բարձերը և նրանց արանքից հանեց մի թիթեղիա փոքրիկ տուփ: Տուփի մեջ կային նախշուն կտորտանքներ, գունավոր բրդե թելի կծիկներ, հին կոճակներ: Յերեմի ֆաթմա տատիկն Այնային թուլ եր տալիս ջոկել, դասավորել այդ տուփի իրերը, բայց հիմա Այնային բոլորովին ուրիշ բան եր հարկավոր — նա մկրատն եր փնտում:

Հրես, վերջապես, ֆաթմա տատիկի մեծ, փայլուն մըկրատը: Այնան տուփը դրեց տեղը, վազեց պատուհանի մոտ և գուրս նայեց: Ֆաթմա տատիկը նստած եր իր սովորական տեղում: Այն ժամանակ Այնան շտապով հանեց զգեստը և փոեց ներքնակի վրա: Զգեստը ծածկեց ամբողջ ներքնակը:

— Յերկար զգեստը քայլելիս խանգարում ե, շնչում եր Այնան ինքն իրեն: — Կուլիզադեն ասաց. «Տես, ինչ կարճ ե Մայանեյի զգեստը». Դե, հենց դրա համար ե, վոր ֆաթմա տատիկը չարանում ե Մայանեյի վրա, բայց Մայանեն իսկի չի ել վախենում նրանից: Մայանեն նրա թոռը հն չի:

Այնան դուփը թեքեց դեպի ուսը և նայեց զգեստի փեշերին: Ինչքան կտրել նա մկրատով գծեց: սա շատ ե, քիչ ե:

— Ալլահը զիաի, իսկ Այնան չի իմանում: Ոգնիր, ալլահ, — հանկարծ շտապով ասաց Այնան և վստահ կերպով սկսեց կտրել:

Մկրատը բութ եր, իսկ Այնայի զգեստը շատ դիմաց կուն: Նա շատ դանդաղ եր կտրում: Վայ, ինչքան ծուռն ե: Մի փոքր ել: Յեվ ահա վերջապես պատրաստ ե:

Այնան մկրատը պահեց ներքնակի տակ, վախենալով, վոր կարող են ներս զալ, և զգեստը հագափ վայ, սա ի՞նչ ե, կարծես թե սա Այնան չի, այլ ուղտի մի փոքրիկ ճուտ — այնքան յերկար ու բարակ են նրա վոտները: Մի վայրկան նա սարսափեց: Սարսափ ու ամոթ զգաց: Ել ինչպես հիմա Այնան բակը գնա, ինչպես տանի Զփլաղին: Բացի այդ, զգեստի փեշերը կարծես հավասար չեն: Մի կողմն ավելի յերկար ե, կարծես:

— Այնա, Այնա, — գոռաց բակից ֆաթմա տատիկը: — Եղ ուր ես կորել: Իմ մկրատը տուփի միջից հանիր, բեր:

Այնան պպկեց և կուչ յեկափ: Նա ուզեց թագնվել: Նայեց զգեստից կտրած կտորին: Նորից չկարել տեղը:

— Այնա, Այնա — բարկանում եր բակում ֆաթմա տատիկը:

Ճար չկար: Այնան զգույշ մկրատը ներքնակի տակից, տխուր-տխուր նայեց մկրատին: Կուաց բակը:

Այդպես քայլելը նրա համար անսովոր եր, անհարմար, և վոտները սառչում եյին: Այնան կոացած եր քայլում, վոր զգեստը մի քիչ յերկար յերեար:

— Եյ, Այնա, ուր ե քո զգեստը: Մոռացել ես, չես հագել, Այնա, — գոռաց հարկանի փոքրիկ աղջիկը:

— Եյ, Այնա, վայ, Այնա: Ուր ե քո զգեստը, Այնա, — ճգնակում եյին բակի բոլոր տղաներն ու աղջիկները: Յեվ նրանք բոլորը վազեցին Այնայի հետեւից:

Ֆաթմա տատիկը նայեց Այնային: Վերմակ կարելու թելը խճճվել եր և նա ուշի-ուշով քանդում եր կապը:

Այնան մոտեցավ ֆաթմա տատիկին ու մկրատը դրեց նրա ձեռքը:

— Առ մկրատը, — ասաց նա:

Ֆաթմա տատիկը բարկացած եր, վոր թելը կապ եր ընկել, վոր ծերությունից ցավում եյին վոտները, և նա դժգոհ եր ամեն բանից այս աշխարհում: Նա վերցը մկրատը և գլուխը բարձրացը եց, վոր մի քիչ զոռգուա: Բայց յերբ նայեց Այնային, մկրատը վայր զցեց ձեռքից: Եսկ բերանը, վոր բաց եր արել՝ մի քիչ զոռգուալու՝ հենց այնպես բաց ել մնաց: Վերջապես նա ձեռքը մեկնեց Այնայի հյուսերին և դանդաղ հարցը եց.

— Վհրտեղ ես կորցը ել փեշերդ:

Մի վայրկյան միայն Այնան լոեց: Նա մտածեց: «Այթե մեծ բերան ունի ֆաթմա տատիկը, հա», ապա նա աշխատեց ժպտալ:

— կտրել եմ:

Ֆաթմա տատիկը խեղդվում եր բարկությունից:

— Եսպես լավ զգեստի փեշը կտրել ես: Վայ, յերկի Ալլահը աղջկա խելքը պլից առել ե: — Յեվ ֆաթմա տա-

տիկի բարձրացած ձեռքը ցած իջավ — խելքը կորցրած
աղջկա հյուսերից քաշքել չի կարելի:

Այսան մացել եր ֆաթմա տատիկի յերեսին նայելիս,
հանկարծ նա բոլորովին հեզ ու խոնարհ ասաց.

— Մոլան ե հրամայել:

— Մոլան ե հրամայել: Եդ ինչ ես ասում, աղջիկ:
Այսան, թափ տալով իր փոքրիկ հյուսերը, մի անգամ
ել կը կնեց.

— Մոլան ե հրամայել:

Դեպի ջրհորն եր գալիս Զեյնաբը:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Զեյնաբը և գետնին
դրեց լաթերով լի մի զամբյուղ: — Ուր ե Զփլաղը:



— Քնած ե, — պատասխանեց Այսան: Ապա հանկարծ
լաց յեղավ ու պղղեց: Ինչպես կարողացավ նա այսպիսի
սարսափելի բան ասել մոլայի մասին: Նա ինքն ել չգիտի,
թե ինչպես բերանից այդպիսի բան դուրս թռավ:
Իսկ ֆաթմա տատիկը տարորինակ հայացըով նայում
եր Այսային:

— Վայ, ալլահը խելքը գլխիցն առել ե: Վեր կաց, Այսան
Այսան հնագանդ կերպով վեր կացավ:

— Ցնդել ե, — հարցրեց Զեյնաբը: — Ուր լսելքն ե
ցնդել — թեվ ապա հանկարծ թափահարեց ձեռները և հար-
ձակվեց Այսայի վրա:

— Ալլահ, ալլահ: Եդ ինչ ես արել գու քո զգեստը:

— Մոլան ե հրամայել, — կամացուկ կրկնեց Այսան:

— Մոլան հրամայել ե, վոր զգեստդ կտրեմ: Ուրեմն
ճիշտ ե, ալլահը մոլլակի խելքը գլխից առել ե: Վայ մեզ:

— Դե, չե, մոլան բոլորովին առողջ ե, միայն նա
ասաց, թե հիմա պիտի կարճ զգեստ հագնել: Հետո մոլան
ասում ե, «ասա մորդ, թնդ կատարի բոլորը, ինչ վոր
հրամայում ե մոլան» — հանկարծ սկսեց ավելի վստահ
կերպով ստել Այսան:

Ֆաթմա տատիկը շտապով հանեց իր ուլունքով քսակը:
Նախ քան վորեե բան ասելը, նա պիտի քիթը լցնի քթա-
խոտով: Յեվ Զեյնաբն ու Այսան լուռ սպասում եյին, մինչեւ
վոր ֆաթմա տատիկը փոշտար, վերջացներ:

Հաստիկ Լալան շորորա-
լով անցնում եր բակով: Նա
մի կաթսա յեր տանում դեպի
ջրհորը: Կաթսայի մեջ զնդզըն-
դում եր մի թիթեղյա տուփ,
ավազով լցըած:

— Տես, — շնչաց Զեյ-
նաբը, — մի սրա զգեստը տես:
Մոլան ինքն ե հրամայել,
վոր կտրեն:

— Մոլան: — Իսկ Մայա-
նեն վաղուց ե արդեն մոլլայի
կամքը կատարել, — խոհեմա-
քար սատց Լալան, վոր ֆաթ-
ման չբարկանա:

Ֆաթմա տատիկը վերջացրեց իր փոշտոցը:

— Փրկիր, ալլահ: Մի քիչ սուս կաց, Լալա: Դնւ ինչ
գործ ունես եստեղ, — ճշաց նա Այսայի վրա: — Կորիր, կո-
րիր աչքից:

Այսան ֆաթմա տատիկի «աչքից հեռացավ»: Նա նստեց
տատիկի յետև: Նրա կողքին նստեցին նաև հարկանի փոք-
րիկ աղջիկը և մյուս բոլոր յերեխաները:



— Քանի վոր մոլլան և հրամայել—մոլլայի և որենքի դեմ չես կարող գնալ:

— Վայ մուկ յեփփի քո կաթսայում, Լալա, — բարկացավ ֆաթմա տատիկը, — ինչի վրա յես ուրախանում՝ Միթե յես ասում եմ, թե մոլլային պիտի հակառակել: Յես ել եմ ասում, վոր մոլլայի և որենքի դեմ գնալ չես կարող: Միայն թե, թող աչքիս լույսը խավարի, բայց յես եսպես անշնորքություն չտեսնեմ: Գնա, Զեյնաբ, մոլլայի մոտ, մի լավ խոսիր նրա հետ, գուցե փոխի նա իր վորոշումը:

Այնան լսեց՝ «Գնա մոլլայի մոտ» խոսքերը: Դադան գնա մոլլայի մոտ: Վայ, չի կարելի, վոր դադան գնա եստեղ:

— Ի՞նչ ես ասում, ֆաթմա տատիկ. Մոլլան ասաց՝ «կարիք չկա, վոր մայրերը գան եստեղ»:

— Դու դեռ խոսհւմ ես, անպիտան աղջիկ: Դու դեռ եստեղ ես:

— Դե վոր մոլլան ասել ե—ուրեմն ասել ե,—հանդարտ ասաց Լալան:

Նա արդեն ավազով մաքրում եր իր կաթսան և մտածում:

«Կարձ լինի զգեստը, թե յերկար, միթե դա միենույնը չի, յեթե աղջիկը վազվում ե փողոցում»:

Բայց նա չեր համարձակվում այդպես ասել: Ի՞նչ կասի ֆաթմա տատիկը:

— Վայ, ես ի՞նչ դժվար ժամանակների յենք հասել,— հասաչեց Զեյնաբը: — Ի՞նչ արած, ժամանակները փոխվել են, յերեխ ժամանակի հետ մոլլաներն ել են փոխվել:

Այնան նստեց մոր կողքին:

— Դադա, այ դադա, ի՞նչու յես վշտանում: Կուզես գնամ, փեշի կտորը բերեմ: Զե վոր նրանից մի վարտիկ կարող ես կարել Զգլաղի համար:

— Կորիր եստեղից, կորիր, — ճշաց ֆաթմա տատիկը:

Այնան հանկարծ ուրախացավ: Դադան մոլլայի մոտ չի գնա, իսկ ի՞նչ լավ ե վազվել յերբ յերկար զգեստի փոխարեն՝ տաք բամին ե մեղմիկ խփում փոսներիդ և թվում ե, թե կանգնած ես ծովի մոտ:

IX.

ԲԱՆԸ ՀՈ ԱՐԿՂԵՐԸ ԶԻ

— Վայ, ալլահ, ալլահ. Զի կարող պատահել, վոր աղջիկն եստեղ կորած լինի: Ո՞վ կա եղանեղ:

Կինը կանգնած եր այն դռան առաջ, վորի վրա կախված եր ցուցանակը:

ՀՆԹԵՐՑԱՐԱՆ

Ցուցանակի տառերը խոշոր ելին և գույնդգույն:

— Ի՞նչու չես բաց անում դուռը, — ճշում եր կինը: — Կարծում ես հեշտ ե գուռ ծեծելը: Հո ձիու պայտ չեմ խփում:

Իսկ ընթերցարանում այդ ժամանակ ճվճվան Մայանեն վիճում եր Մանափի հետ:

— Յես ասում եմ, վոր պիտի գուան մոտ դնել: Եստեղ լավ չի:

— Յես ել ասում եմ, վոր ենտեղ չի տեղավորվում, պիտի սղոցով մի փոքր կտրել, — տաքանում եր Մանափը: Պիտի շատ քիչ սղոցել:

— Վոչինչ ել պետք չի: Այ, եսպես Դժվար հո չի: Մայանեն մի քիչ քաշեց սեղանը:

— Դարակն ամբողջ ուժով ես կողմը հրիբ: Դափլան, արի եստեղ: Ի՞նչ ես կանգնել սիրամարզի պետ:

Յեկ նրանք յերեքով միասին հրեցին դարակը, Դարակը ճոճուց և շարժվեց տեղից:

— Պատրաստ ե, — ուրախանում եր Մայանեն: Հո դժվար չեր: Մեկը, յերկու — և պատրաստ ե:

— Դուռը ծեծում են, կարծես, — գալլերեյից լսվեց կուլիզադեյի ձայնը: — Իմ ձեռները զբաղված են, յես չեմ կարող դուռը բաց անել:

— Այս, ծեծում են: — Մանափը վազեց դուռը բանալու:

— Վայ, սպասիր, — ասաց Մայանեն ու վազեց դեպի Մանափը: — Սպասիր, գեռ բաց չանես, լսում ես:

— Ի՞նչ ե, վոր:

— Լսում ես: Դա կարծես մայրս ե: Մանափը պազեց:

— Եմայրդ, — հարցրեց նա շշուկով: — Ի՞նչո՞ւ մայրդ:
Ի՞նչ ե պատահել: Բաց անեմ, թե՞ հարկավոր չի:

— Վայ, բաց չանես: Նա ինձ չի թողնում եստեղ գալ:
Տուն կտանի: Ամբողջ հյուսերս կպոկի:

— Գրադարանապետ, եյ, արի եստեղ, — բարձր շշուկով
ասաց Մանաֆը: — Մայանեյի մայրն ե գուռը ծեծում:
Մայանեյին ե փնտում: Տուրուդմփոցը կցի:

Կուլիզադեն առանց շապկի, միայն արուսիկով, ձեռ-
ները մինչև արմունկները ցեխսոտ, գնաց Ղափլանի յետեկից:
Հատակին, համարյա թե ուղիղ գուան տակ, պազած եյին
Մանափն ու Մայանեն: Մայանեն ձեռը սեղմել եր բերա-
նին: Նա յերկի վախենում եր, թե հանկարծ բարձր կխոսի:
Մանափը հոնքերը կիտած, բարկացած նայում եր Մայա-
նեյին: Կուլիզադեն ել պազեց, Բոլորը լուռ՝ ականջ եյին
դնում: Միայն Մայանեն եր կամացուկ շշնջում.

— Շշշ...

— Իեհ, — հարցրեց Ղափլանը:

Մանափը համարձակ վեր թուավ տեղից և վազեց դեպի
դուռը:

— Յես իսկույն գուրս կանեմ նրան եստեղից:
— Ի՞նչ ես անում, Մանափ, — ասաց Կուլիզադեն: —
Յեթե Մայանեն վախենում ե, թող գնա գալլերեյան: Իսկ
մորը պեաք ե ներս թողներ:

— Յես բոլորովին ել չեմ վախենում, — ասաց Մայա-
նեն: — Նա սկզբումն ե միայն մի քիչ զոռզոռում ու կըռ-
վում: — Բայց մի բոլե մտածելուց հետո ասաց: — Բայց և
այնպես ավելի լավ ե, յես գնամ:

— Ո՞ւր ե եստեղի գլխավորը: Դու յես գլխավորը: Դու
յես վարիչը, — ճշալով ներս ընկավ Լալան: — Դու ել ես ես-
տեղ, Մանափ: Տանը մեկը չկա, զոր խանութ վազի, իսկ
սա եստեղ վեր ե ընկեր: Ո՞ւր ե գլխավորը:

Կուլիզադեն ժպտում եր: Յեխսոտ ձեռները չուած՝ նրա
դեմքից քրաինքի հետ ցեխաջուր եր ծորում, իսկ արու-
սիկը սոսինձի մեջ ամբողջովին կորած եր:

— Յես եմ գլխավորը:

— Վայ, ալլահ, ես ի՞նչ տեսակ գխավոր ես նշանակել
ես տանը: — Միթե դու վոշինչ չունես հագնելու: Վորտեղ
ես պահել Մայանեյին:

— Ի՞նչ ես ասում, Լալա, Մայանեն տանն ե, վագ-
վում ե բակում, — առաջ վազեց Ղափլանը: — Յես ենտե-
ղից անցնում եյի, տեսա: Ինքս տեսա:
— Յես նո քեզ չեմ հարցնում: Դու գլխավոր ունես:
Թող գլխավորը խոսի:

Սակայն Ղափլանը լավ եր հասկանում, վոր գլխավորի
համար շատ անհարմար ե խոսել, յերբ ձեռներն այդ դրու-
թյան մեջ են: Բացի այդ, Ղափլանն այնքան ել հույս չեր
գնում գլխավորի վրա: Նա կարող ե մատնել Մայանեյին:
Կասի, թե չե կարելի ստել, ինչպես վոր ասաց, թե պեաք
ե ներս թողնել եղ հիմար Լալային: Դրա համար ել Ղափ-
լանը կանգնել եր Կուլիզադեյի ու Լալայի միջև և, գլուխը
տմբոմբացնելով՝ համոզված խոսում եր.

— Այ, Լալա խանում, դու իսկի եսպես սենյակ տե-
սել ես: Մի լավ մտիկ արա, գուցե ել յերբեք չտեսնես:
Տեսնում ես՝ ինչքան զիրք կա: Դա շըջանն ե ուղար-
կել մեզ:

Լալային դուր եր գալիս «շըջան» խոսքը: Կարծես,
Ղափլանը հասկացավ այդ: Լալային թվում եր, թե շըջանը
մի մեծ թուրք է՝ յերկար մորուքով, թանգարժեք փափա-
խով և գեղին կաշվե պորտֆելը՝ թիկ տակ: Շըջանը գնում
ե ու կարդադրում ամեն տեղ: Յեվ հրես հիմա ել ասում
են, թե նա եստեղ ե յեկել: Արդյոք սուտ չի խոսում եղ
անպիտան տղան:

— Վայ, ալլահ, թող իմ որը սև լինի, յեթե շըջանն
եսպես դատարկ բաններով զբաղվելիս լինի: Շըջանի գլխում
ավելի կարենը գործեր կան:

— Նստիք, Լալա, — Մանափը մի աթոռ քաշեց նրա
համար:

— Մեր հյուրն ես, — վրա բերեց Կուլիզադեն, վոր ար-

գեն լվացվել եր և մազերը կարգի բերելը:
Լալային այս հանգամանքը դուր յեկավ: Նա մեղմացավ,
նայեց աթոռին և, ձեռքով լավ սրբելուց հետո՝ նստեց:
Աթոռը զրված եր ուղիղ սենյակի մեջտեղը: Կուլիզադեն
վերցրեց մի ուրիշ աթոռ և նստեց նրա գիմաց:

— Ասում են, թե բակերը պիտի ման գաս և յերեխա-

ներ հավաքես, — մի քիչ լոելուց հետո, ասաց Լալան:

— Ի՞նչո՞ւ պիտի հավաքեմ: Իրենք կդան, յեթե ուզեն:

— Ասում են, թե նրանց ստիպում ես վատ գրքեր

կարդալ:

— Ինչու պիտի վատ գրքեր կարդալ — նրա յեղանակով ասաց Կուլիզադեն: Իսկ Ղափլանը դարակից վերցրեց մի պատկերազարդ գիրք:

— Տես, Լալա խանում, միթե սա վատ գիրք ե: Տեսնում ես, սրանք վոչխարներ են, սա ել այդի յե: Թող, գրադարանապետ, յես հիմա ցույց կատամ, թե ինչքան վատն են մեր գրքերը, — տաքացավ Ղափլանը:

— Տեսնում ես, այգում վարդեր կան, սրանք ել կակաչներ են, — ասաց Մանաֆը:

Լալան ամբողջապես ժպիտ դարձավ:

— Իմ ծաղիկները ինձ նման են: Զե՞ վոր նրա անունը Լալա յեր, իսկ դա նշանակում ե կակաչ, — «կակաչների փունջ»: և նա միշտ համոզված եր, վոր ինքը նման ե աշխարհի ամենալավ կակաչին:

Ղափլանը շվիճեց նրա հետ: Կուլիզադեն ժպտում եր: Հիմա Լալան բոլորովին հանգստացել եր: Նա շատ հաստ եր, յերկար ժամանակ բարկանալ չեր կարող: Բակում յերեխաները նրան սիրում ելին և քիչ ելին վախենում նրանից: Ճիշտ ե, նա շատ խիստ եր կովում, բայց յերկար չեր տեսում: Ուղղակի պետք ե նրա բարկացած ժամին՝ ձեռքը չընկնելին: Բացի այդ, նա քիչ եր լինում տանը: Գնում եր ուրիշների համար վերմակ կարելու, յուղ հալելու, սպիտակեղեն կարկատելու:

Լալան հառաչեց: Իսկ գալերեյում դատարկ արկղերի յետև հատած եր Մայանեն:

— Ել չի գոռգոռում, գուցե դուրս կդաս, — շշնջում եր Մանաֆը:

— Վայ, չե, հենց վոր ինձ տեսնի, նորից կգոռա:

— Հրես Մանաֆը գիտի՝ ամուսնուս սպանել են, — հառաչեց Լալան: — Մենակ Մայանեն ե մնացել: Են ել Մանաֆի հայրն ինձ խելքից հանեց, թե աղջկանդ խորհրդային դպրոց տեսր: Շուտով, ասում ե, նա քեզ կարող ե պահել: Իսկ հիմա չգիտեմ, թե եղ աղջիկը վնրաեղ ե կոր. չում ամեն որ:

Լալան դժվարությամբ վեր կացավ տեղից և աթոռը մի կողմ դրեց:

— Դեհ, յես գնամ: Գլխավոր-ջան, ոչքիս լույս, յերբ Մայանեն գա եստեղ, դուրս արա: Վայ, յերեկի յես չեմ տեսնի են որը, յերբ Մայանեն պորտֆելով ման կգա:

Կուլիզադեն լուռ եր: Մանաֆը վազում եր զեպի դուռը. քանի շուտ ե, թող գնա ես հաստ Լալա-խանումը, թե չե ով գիտի, ինչ կպատահի:

— Մայանեն, Մայանեն, շուտ արի, — վազեց նրա մոտ Ղափլանը: Բայց Մայանեն արդեն վազելով գալիս եր:

— Գնաց, — ուրախացած ճշում եր նա:

— Գնաց, գնաց, — թեթևացած սրտով հառաչեց Մանաֆը:

Իսկ Կուլիզադեն խճճում եր իր զանգուր մազերը:

— Վայ, ինչ վատ ե, յերեխաներ: — Յեկ յերեխաները միանգամից լսեցին: — Ճիշտ ե, չե, վոր վատ ե:

— Իսկ միթե դժվար ե արկղերի յետև մի քիչ նստել:

Միթե դժվար ե, — կամացուկ ասաց Մայանեն:

— Ի՞նչ ես հիմար-հիմար խոսում, — նրա խոսքը կտրեց Մանաֆը: — Կուլիզադեն ճիշտ ե ասում: Բանը հն արկղերը չի:

X.

ՊՅ, ԼԱԼԱ, ԵՆՏԵԼ ՔԵԶ ՄԻ ՌԱՄՐ ՄԱՐԴ Ե ՓՆՏՈՒՐ

— Դադա, եղքան շատ հյուսեր մի անի, — խնդրում եր Այնան: — Պետք ե յերկու հատ լինի:

— Աղջկանն անվայել ե յերկու հյուսեր աներ: Ինչքան շատ հյուս լինի, աղջիկն այնքան ավելի հնազանդ կլինի: Միթե դու եղ չգիտես, — ասում եր Զեյնարը, սանրելով Այնայի կարճ մազերը,

— Խնդրում եմ, դադա: Վոչ վոք վեց հյուս չի անում: Զի կարելի վեց հյուս աներ, յերբ կարճ զգեստ են հագնում:

Զեյնարը նայեց Այնայի զգեստին: Նրա համար արդեն սովորական եր դարձեր: Զգեստի վեցն արդեն ծալված-կարգած եր, և վորովհետև Այնան հավասար չեր կարել, ուստի կարելուց հետո ավելի յեր կարճացել:

Զեյնարը չեր կարողանում յերկու հյուս աներ: Յերկու հյուս, ինչպես անում են բոլոր անհավատ աղջիկները:

Բայց գուցե մոլլան կհրամայի, վոր մազերը բոլորովին կարեն, Ո՞վ կարող ե իմանալ, թե մոլլան ինչ կցանկանա: Վայ, ալլահ, ինչքան համբերություն ե հարկավոր հիմա:

— Թոնդ, դադա, ինքս կհյուսեմ,—ասաց Այնան, և Զեյնաբը հառաջեց:

— Ի՞նչ արած, ինքդ հյուսիր, յեթե մայրդ քեզ չի կարողանում բափարարել:

— Ի՞նչ ես ասում, դադա: Այ, տես ինչքան լավ ե մինում:

Յեվ Այնան սկսեց արագ արագ հյուսել իր կարճ մազերը, վորովհետեւ նա արդեն շատ անդամ եր այդ փորձել անկողին մտնելիս:

— Տեսար՝ ինչ շուտ յեղավ: Ավելի շուտ, քան թե վեց հյուս անելիս:

Զեյնաբը ժպտաց: Շատ թույլ ժպտաց: Գուցե աղջիկն իրավացի յե, զուցե հսազանդ լինելու համար միանդամյն միննույն ե, յերկու հյուս անել, թե վեց: Թող ապրի, թող ծիծաղի: Միայն թե ֆաթմա տատիկը չբարկանա:

Իսկ ֆաթմա տատիկը բարկանում եր, նա սովոր եր՝ առավոտն ամենից առաջ լինել ջրհորի մոտ: Նա ճշում եր, յերբ փորեն բան նրան դուր չեր դալիս: Նա սուրճը խմում եր ջրհորի մոտ և հսնդիտ փոշտում եր այնքան, ինչքան սիրտն եր ուղում: Իսկ հիմա պատկառելի կանանց փոխարեն, հաճախ յերեխաներն են նստում ջրհորի մոտ: Յերեմին ել ուրիշ բակերից են յերեխաներ հավաքվում — ծիծաղում են, կատակներ անում, վազում ու աղմկում: Յեվ Մանաֆը ամենքից ավելի բարձր ե գոռում: Կարելի յե կարծել, թե հասունացած տղամարդ ե: Թոնդ, գոռա: Միթե ֆաթմա տատիկը յերբեք ասում ե: «Սուս կաց, Մանաֆ»: Բայց Մանաֆը խոսում ե: Այնան խոսում ե: Լալան ուրախանում ե: Ինչի համար ե նա ուրախանում: Ամեն-բան, ասում են, թե մոլլան ե հրամայել: Կարելի յե կարծել, թե տանը հայր չկա: Իսկ յերբ հայրը գալիս ե, կարծես՝ թե հայր չի, այլ իսկական վոշար: Փոխանակ կարդ ու կանոն պահպանելու, ծիծաղում ե յերեխաների հետ: «Ապրես, Այնա, — ասում ե, — վազգիր, շուտով դպրոց կգնաս՝ յերբ վոր փոխադրվենք բանվորական նոր ավանը»: Ամբողջ

կյանքը խճճել են, բոլոր տեղերը խառնել, ամեն գլխի վրա յեն շուռ տվել: Բայց ինչպես ե մոլլան եսպիսի բաներ թույլ տալիս:

Սյապես եր մտածում ֆաթմա տատիկը: Անա նա յեկավ ջրհորի մոտ, իսկ նրա տեղն այն անպիտան աղջիկը, Գյուլիզարն ե նստել:

— Եյ, Գյուլիզար, միթե դու ուրիշ տեղ չունես: Ինչու յես նստել իմ բրդերի մոտ:

— Իսկ դու միթե գնել ես ջրհորը, ֆաթմա տատիկը — հանկարծ լսեց ֆաթման՝ Մանաֆի ձայնը: — Հո չես գնել:

Ֆաթմա-տատիկը նույնիսկ շփոթվեց, այնքան անպասելի յեր: Իհարկե, նա ջրհորը չեր գնել: Ո՞վ ասաց, թե գնել ե:

— Կորիր եստեղից, անպիտան աղա, կորիր վաղուց ե, ականջներդ անգործ են մնացել: Հըես հայրդ կդա...

Գյուլիզարը մի կողմ քաշվեց: Նա ժամանակ չունի ֆաթմա-տատիկի հետ կովելու: Դեռ մի ամբողջ կապոց բուրդ կա քրքրելու:

Այնան նստած եր ջրհորի մյուս կողմը և նույնպես բուրդ եր քրքրում:

Ամառը վերջանում եր: Ամառվա ընթացքում հարկավոր եր բուրդը լվանալ և բոլոր վերմակները նորից կարել: Աշխատանքը շատ եր:

Մանաֆը սուլեց: Այդ նշանակում եր, վոր այսոր ընթերցարանում ժողով կա: Մանաֆը գեռևս թիչ եր խոսում Այնայի հետ և քիչ եր նկատում նրան: Բայց հիմա, յերբ Այնան հաճախ եր վաղում ընթերցարան, և յերբ կուլիզագին ասաց: «Ի՞նչ լավ քույրիկ ունես գու», Մանաֆը յերեմն մտածում եր. «Չնայած Այնան փոքր ե, աղջիկ ե, բայց և այնպես Մայնելից վատ չի»:

Այնան նայեց Մանաֆին և ծիծաղեց:

— Եյ, յերեխաներ, — հանկարծ գոռաց Մանաֆը բարձր ձայնով, — Եյ, ոկ ե խաղում:

Իսկույն բոլոր գոներից, պատուհաններից և դարպասի մոտից գուրս թափվեցին յերեխաները: Յերեխաների մի ամբողջ հոտ: Յեթե Մանաֆը գոռում ե, ուրեմն լավ կինի: Յեթե Մանաֆը խաղում ե, կնշանակի շատ ուրախ կանցնի խաղը: Մանաֆն ամենից մեծն ե և սիրում ե յերեմն բակում իրարանցում գցեր:

Մոթալա, մոթալ,
Դերգի մոթալ,
Շի աթար,
Դայմաղ դաթար:

— Յեկեք վիճակ գցենք, յերեխաներ,—դուռում եր Մա-
նաֆը:

Մոթալա, մոթալ...



Մանաֆը մնաց: Նա պիտի աչքերը փակի:
Յերեխաները ցրվեցին բակում, իսկ Այնան նստել ու
բուրդ եր քըրբում: Նա նեղանում եր, իհարկե: Նա ել եր
ուղում վազվակել, պահմտոցիկ խաղար: Դեռ ես Զփլաղն ել
եստեղ սկսեց հեծկլտար:

Այնան նայեց Ֆաթմա-տատիկին: Նա աչքերը փակ՝ հան-
գիստ նստած եր: Գուցե քնած ե,

Այն ժամանակ Այնան կամացուկ դուրս քաշեց բրդի
կապոցի տակից մի փաթեթ:

— Շ-շ-շ... Զփլաղ, սուս կաց...

Այնան բացեց փաթեթը: Դա մի գիրք եր: Այնան ըն-
թերցարանից եր վերցրել: Կուլիզադեն եր նրան թուլատրել:

Այնան բաց արեց գիրքը, ավելի հարմար նստեց: Զփլա-
ղին մոտ քաշեց և նորից նայեց Ֆաթմա տատիկին:

— Արի, նայենք: Զփլաղ: Բայց սուս կաց, թե չե-
ֆաթմա տատիկը գիրքը կիսի:

Զփլաղը լավ եր հասկանում, թե իրենից ինչ ե պա-
հանջվում: Նա միայն ասաց.

— Դեհ, Այնա, շուտ ցույց տուր:

Այնան շատ անգամ եր նայել այս գրքի պատկերներին
և ամեն անգամ ավելի ու ավելի յեր հավանել:

— Այ, իշուկը վագում ե: Այ, մարդիկ են գալիս: Տես,
ինչպիսի ծերուկ ե, Զփլաղ, — ասում ե Այնան:

Յեվ Զփլաղը կոանալով գրքի վրա՝ մատները քսում
եր պատկերներին:

— Վայ, չեմ կարողանում իշուկին բռնել, Այնան Վայ,
չեմ կարող, — հանկարծ լաց յեղավ Զփլաղը: Զի բռնվում
իշուկը Այնա, վայ, չի բռնվում:

Յերեխաները վագում եյին ուղիղ դեպի Այնան:

— Ցույց տուր, Այնա, ցույց տուր:

— Տեսեք, ելի, յես հո չեմ ափսոսում:

— Տներ տեսնեմ, Այնա, տներ տեսնեմ:

— Զի կարելի, — լրջությամբ պատասխանեց Այնան: —

Զի կարելի:

— Կորեք, կորեք եսաեղից: Վոտի տակ մի ընկնեք, —
հանկարծ լսեց Այնան Լալայի ձայնը: Այնան շտապով
գիրքը ծալեց, բայց չկարողացավ թագցներ:

— Եդ վհրտեղից ե, — հարցը Լալան: — Վհրտեղից ե
գիրքը: Յեվ Լալան ել, Այնայի պես, նայեց Ֆաթմա-տա-
տիկին:

— Ցույց տուր, Այնա, — ասաց Լալան՝ նստելով յերե-
խաների կողքին:

Նա միանգամից այնքան շատ տեղ բռնեց, վոր ճնշեց
բոլոր յերեխաներին: Իսկ յերեխաները բարձրացան նրա
ծնկներին, ուսերին և բոլորովին ծածկեցին նրան:

— Եյ, Լալա, — հանկարծ ճշաց Այնան: — Եյ, Լալա,
արի եստեղ: — Բակով անցնում եր մրւո Լալան՝ Այնայի

փոքրիկ ընկերուհին: Մյուս լալան նույնպես, բոլորին հրելով՝ հասավ Այնային, բայց նստելով նրա կողքին՝ շատ փոքրիկ տեղ բռնեց:

Յերկու լալան և բոլոր յերեխաներն սպասում եյին, մինչև վոր Այնան գիրքը բանար: Միանգամից լոռվյուն տիրեց: Այնան զգուշ բաց արեց գիրքը, ուղիղ գրքի մեջտեղը, ուր նկարված եյին վառ-կարմիք կակաչներ — կակաչների մի ամբողջ փունջ:

— Տեսէք, — ասաց Այնան, — սրանք կակաչներ են:

— Ո՞, — ծիծաղեց մեծ լալան, — ո՞, ինարկե կակաչներ են: Յես — լալա, դու — լալա, գրքումն ել ուրիշ լալա: Ամբողջ յերեք հատ լալա: Ի՞նչ լավ ե, չ՞:

— Այս, ի՞նչ լավ ե, ի՞նչ հետաքրքրական ե: Ես գիրքը լալայի մասին ե գրված, — ասացին ուրախացած յերեխաները:

Իսկ ի՞նքը՝ մեծ լալան հանկարծ գաղարեց ծիծաղելուց: Վորտեղից ե քեզ եղ գիրքը, — հարցրեց նա:

Այնան վոշինչ չկարողացավ պատասխանել: Մանաֆն իսկ և իսկ հեքյաթի արջի նման հարձակվեց լալայի, Այնայի և յերեխաների վրա ու դոռաց, ինչքան կարող եր բարձր:

— Ո՞յ, լալա, ենտեղ քեզ մի ոտար մարդ ե վնտում:

Լալան մոռացավ գրքի մասին: Նա սկսեց գես ու դեն շարժվել վոր տեղից բարձրանա: Նա յերեխաներին թափ տվեց իր վրայից:

— Ի՞նչ մարդ ե, ի՞նչ մարդ:

— Յերկար մորուքով:

Մանաֆ հնարեց այդ բոլորը, վորովհետեւ ամեն-ինչ լսել եր և վախենում եր, թե հանկարծ Այնան կմատնի ինքն իրեն:

XI.

ԻՍԿ ՎՈՐՏԵՂԻՑ ՓՈՔՐԻԿՆԵՐ ՃԱՐԵՆՔ

Այսոր նշանավոր որ ե ընթերցարանի համար — պետք ե փոքրիկների անկյուն սարքեր: Այնան լավ չի հասկանում, թե ինչ և այդ: Այսոր ել, ինչպես միշտ, նա ճանապարհեց դեպի մոլլան, բայց մոլլայի մոտ գնալու փոխարեն ճանապարհին մտավ ընթերցարան:

Այնան արագ բարձրացավ սանդուխքով և ներս թռավ սենյակ: Պատուհանի մոտ նստած եյին յերեխաները, Մանաֆը, Ղափլանը, Մայանեն, լալան և ելի մի քանի նոր յերեխաներ:

— Իսկ վորտեղից փոքրիկներ ճարենք, — հարցնում եր Մայանեն: — Վորտեղից: Մեր բակից վոչ վոքի չեն թողնի:

— Ի՞՞չ փոքրեր: Մեծերն ել մեզ մոտ քիչ են գալիս:

— Յես գիտեմ. դա յերկու նրանից ե, վոր հիմա ամառ ե, — ասաց Ղափլանը:

Նա հենց ինքն այսոր այնպես ցանկանում եր, փոխանակ ընթերցարան գալու, ամբողջ որով գնալ ծովափ, թափառել այնտեղ, լողանալ, արևի տակ մի քիչ պառկել՝ տաքացած քարերի վրա: Յերբեմն նա իսկապես վոր փախչում եր և վերադառնում թարմացած, ուրախ, բայց մի քիչ շփոթած, չնայած կուլիզաղեն գովում եր նրան դրա համար: Միայն Մանաֆն եր հայնոյում: Նա դեռ չեր կարողանում ներել Ղափլանին, վոր նա այն որը՝ յերեխաների յետուից փախավ դեպի ծովը:

Այնան լալայի հետ նստած եր մի աթոռի վրա: Այսոր նրանը յերկուան ել ամենին չեյին գնացել մոլլայի մոտ:

— Դու վախենում ես, — կամացուկ հարցրեց Այնան:

— Վո՞չ, չեմ վախենում, — շշնջում եր լալան: — Միայն մի քիչ եմ վախենում: Հանկարծ փորեկ բան կպատահի: Դադան կիմանա:

— Մակայն վորտեղից մենք փոքրիկներ կճարենք, — սորից հարցրեց Մայանեն:

— Հո անպայման մեր բակից չպետք ել լինեն, — ասաց Մանաֆը:

— Տես, ինչքան փոքրիկներ են վազվում, և վոչ վոքություն չի դարձնում նրանց վրա:

— Ե՞յ, կուլիզադե, գրադարանապետ, — գոռաց Ղափլանը: Վորտեղից պիտի փոքրիկներ ճարենք:

— Ի՞նչ փոքրիկներ, — ասաց կուլիզադեն գալերեյից:

— Ի՞նչպես թե: Իսկ մեմ համար ես դու աթոռներ սարքում:

Կուլիզադեն մտավ սենյակ: Զեւքին ըռնած եր մուրճը, իսկ ականջի յետեն անց եր կացրել մի մատիտ, ինչպես անում են հյուսները:

— Դուք յերեխ ուզում եք այստեղ իսկական մանկապարտեղ դարձնել: Ինչու պիտի մենք փնտռենք փոքրերին: Նրանք իրենք կզան:

— Ինչպես չե, կզան: Տեսնում ես, մեծերն ել քիչ են դալիս, — որից փնթվնթաց Մանաֆը:

— Վոշինչ, — աչքերն ուրախ կոոցում եր Կուլիզադեն: — Այ, կտեսնես, աշնան դեմ մեզ մոտ նույնիսկ նեղվացք կլինի:

Իսկ Մանաֆը ցանկանում եր, վոր ընթերցարանն ու դալիբեյան հենց հիմա լցվեն յերեխաներով, վոր ձան, աղմկեն և այնպես ուրախ լինի, ինչպես յերբեմն ուրախ թափահարում ես ձեռներդ՝ կատակով կովելու համար:

Յերեխաները զնացին գալլերեյան: Այնտեղ պատի յերկայնքով Կուլիզադեն մի ցածիկ նստարան եր շինել:

— Սա կլինի սեղանը, այստեղ կդնենք գրքերն ու խաղալքները: Բոլորը, ինչ վոր յերեկ գնել ենք, քարշ տուր եստեղ, Մանաֆ:

Մանաֆը բերեց թղթով փաթաթված մի մեծ կապոց: — Յես բաց կանեմ, — կապոցից բռնեց Մայանեն: — Արի, Այնա, ինձ հետ: Դանակը տուր, Մանաֆ:

— Վայ, ինչ գեղեցիկ բաներ են, — ճշաց Այնան: Սըրանք մերն են:

— Փոքրիկների համար ե, — թավ ձայնով պատասխանեց Մանաֆը: — Դու հն փոքրիկ չե՞ս:

— Փոքրիկ չեմ, իհարկե, այլ միջակ: Յես խաղալու յեմ փոքրերի հետ: Այժ, գրադարանապետ: Ասա, խընդրում եմ:

— Իհարկե, խաղալու յես: Լայան արդեն վերցրել եր գնդակը, Մայանեն խորանարդիկներն եր ջոկում, իսկ Այնան գետնին, փորի վրա պառկած, ամբողջ ուժով փչում եր ավտոմոբիլին:

— Թոնդ վազի: — Այ քեզ աղջկա խելք, — չհամբերեց Մանաֆը: — Ախր, զու ի՞նչ ես հասկանում եսպես բաներից:

Յերեխ Մանաֆն ինքը շատ եր ուզում վազեցնել ավտոմոբիլը: Նա վերցրեց, դես ու դեն շուռ տվեց, զննեց:

— Կուլիզադե, հիշում ես, ինչպես խանութում յետ լարում եյի: — Հիշում ես, Կուլիզադե:

— Հիշում եմ: Շատ հեշտ ե, Ո՞ւր ե բանալին:

— Այնա, ուր ե բանալին, վհրանեղ դրիբ:

— Յես չեմ վերցրել: Իսկի չեմ ել տեսել: Վհչ, տեսել եմ: Իսկույն կբերեմ:

Այնան վազեց դեպի դուռը, կոացավ և բանալին դուրս քաշեց անցքից:

— Հրես, — ասաց նա: Հրես այ, բանալի:

— Դեհ, հո սուտ չեմ ասում, թե աղջկա խելք ե, — բարկացավ Մանաֆը, իսկ Կուլիզադեն ծիծաղեց և սկսեց իր գրպանում փնտռել:

— Հրես բանալին յես ինքս եմ գցել եստեղ:

Այնան տեսավ մի բոլորովին, ուրիշ փոքրիկ բանալի:

— Վայ, ինչ հիմարն եմ յես, — ասաց նա և, բանալին բռնած, վազեց դեպի դուռը: — Սպասիր, առանց ինձ շարես:

Կուլիզադեն լարեց ավտոմոբիլը: Մանաֆը պազեց և այսերն ուռեցրեց: Մայանեն թողեց իր խորանարդիկները:

— Մեկ, յերկու, յերեք:

Ավտոմոբիլը շարժվեց, ճկճկաց, ուացավ գալլերեյի յերկայնքով և թրիկոցով դիպավ պատին՝ ուղիղ նստարանի տակ: Մանաֆն իսկույն վերցրեց ավտոմոբիլը:

Շըրիկ-շըրիկ, — հանկարծ լսվեց մի ինչ-վոր շըրիկոց: Հարևան սենյակնեմն ե, գուցե... Մանաֆը վազեց դեպի ընթերցարան, ավտոմոբիլը բաց չթողնելով ձեռքից: Նրա յետեկից վազեցին Կուլիզադեն և բոլոր յերեխաները:

— Ի՞նչ ե պատահել: Վայ, ես ի՞նչ ե:

Պատուհանի ապակին փշրված եր, ձկների բանկան կոտրված, և ջուրը հոսում եր պատուհանում ու հատակին:

Կուլիզադեն վազեց դեպի պատուհանը: Մանաֆն ավտոն շպրտեց յերեխաներից մեկի ձեռքը և սանդուխքով արագ ուացավ դեպի փողոց: Նա վազում եր խաղալիք ավտոյից ել արագ: Մի հարվածովնա բացեց յերկու դուռը միասին: Թվում եր, թե նա գիտեր, վոր այստեղ, փողոցի անկյունում համնելու յեր նրանց՝ ովքեր կոտրեցին ապակին:

Յեվ իսկապես ինչ-վոր մեկը փախչում եր: Այ, հիմա, իսկույն նրանք կանհետանան — յերեսում են միայն կրունկները, թափահարվում շորերը:

Վազելիս Մանաֆը կուացավ և քար վերցեց, մի մեծ,
կլոր քար, Մանաֆը յերկի ել չեր գիտակցում, թե ի՞նչ
եր անում: Նա միայն գոռում եր. «Ախ, Ղարաբաղի եշեր,
ախ, անպիտաններ: Մեր ապակիներն եք ջարդում»: Վա-
զելով նա ձեռքը բարձրացրեց և առանց նշան բռնելու,
քարը շպրտեց:


Փախչողներից մեկը ճշաց և վոաը բռնեց:

— Ե՛յ, Ռահիմ: Դե մի սպասիր, Ե՛, ելի դու յես: —
Մանաֆը վագում եր ուղիղ նրա վրա: — Ի՞նչ ես ապակի-
ները ջարդում: — և Մանաֆը բռնեց Ռահիմի ոձիքից:

— Իսկ դու ի՞նչ ես կովում, ինչպես ես համարձակ-
վում:

Ռահիմը կանգնած եր մի վոտի վրա: Նա շփում եր
խփած վոտը և ցավից կծկվում:

Մանաֆը, նրա ոձիքից բռնած՝ քաշում եր դեպի ըն-
թերցարան:



— Գժվել ես, ի՞նչ ապակի, — բարձրաձայն լալիս եր
Ռահիմը: — Յես վոչինչ չգիտեմ: Վայ, Մահմեդ, Մահմեդ,
հիմա ինձ կսպանեն, — ճշաց նա հանկարծ, բայց Մահմեդի
հետքն ել եր կորել:

— Վայ, վոտս, Վայ, չեմ կարողանում դաշ վոտս կոտ-
ըել ես: — Ռահիմը կանգ առավ, բայց Մանաֆը քարշ տվեց
նրան, փտած սերկեվիլով լիքը պարկի պես: Ռահիմը կախ
եր ընկնում, ուղում եր դուրս պրծնել նրա ձեռքից և
ճշճում եր:

Այն ժամանակ Մանաֆը նայեց նրան այնքան սարսա-
փելի աչքերով, ինչքան վոր կարող եր և ասաց.

— Նայիր, տեսնո՞ւմ ես սուլիչը: Յեթե դու իսկույն
եեթ չգաս, յես միլիցիոներ կկանչեմ: — Իսկ ինքն իրեն
մտածում եր. «Լավ ե, վոր վոչ վոք չկա մոտերքում»:
Վորովինետև Մանաֆի վզից թելով կախված եր այն սու-
լիչը, վորով նա Այնային ընթերցարան եր կանչում, կամ
շոգեշարժ խաղալիս՝ սուլում: Յեվ, իհարկե, նրա սուլո-
ցից յերբեք միլիցիոներներ չեյին հավաքվում:

Իսկ Ռահիմը վախեցավ:

— Մանաֆ-ջան, հոգուդ մատաղ, թող ինձ հենց հիմա
ալլահը դժոխքն ուղարկի, յեթե ապակին յես եմ կոտրել:
Հն յես չեյի, Մահմեդն եր: Յես նրան ասում եյի. «Ի՞նչու
յես ուրիշի ապակիները ջարդում»: Իսկ նա չեր լսում:
Թող, Մանաֆ: Կուզես մի արծաթ ոռուրի տամ:

Մանաֆը վոչինչ չասաց: Նա միայն նորից ուժով թափ
տվեց Ռահիմին:

— Վայ, վոտս, վայ, վոտս: Յես հիմա կաթված կստա-
նամ, — մոնչաց Ռահիմն իր ամբողջ կոկորդով:

Իսկ գրադարանում այդ ժամանակ յերեխաներն ու
կուլիզադեն հավաքվել եյին ջարդված ակվարիումի շուրջը:
Հատակին թաղտում եյին ձկնիկները — յերկու փոքրիկ, ար-
ծաթափայլ ձկնիկ:

— Վայ, գրադարանապետ, սա ի՞նչ դժբախտություն ե:
Հիմա ի՞նչ անենք, — հեկեկում եր Այնան:

— Շուտ մի թաս ջուր բեր եստեղ, — առաջինն սթափ-
վեց Մայանեն և սկսեց հատակից ձկնիկները հավաքել: —
Դէ, Այնա, շուտ արա, ի՞նչ ես ձայնդ զցեր:

— Ափսոս, ափսոս, — հեծկլում եր Այնան:

— Վայ, ափսոս, — ձայնակցում եր նրան լալան:
Յեվ նրանք յերկուսով վաղեցին թաս բերելու: Հենց
այդ ըովեյին սանդուխքի վրա վոտնաձայն լսվեց և գոռ-
դոռոց ընկալվ: Կարծես թե մի խումբ մարդիկ եյին գալիս:
Կուլիզադեն վաղեց դեպի դուռը:

Մանաֆն եր Ռահիմին քարշ տալիս վերեւ: Նրանք
արդեն հասել եյին սանդուխքի վերեկ վերջին աստի-
ճանին:

— Յես ենտեղ չեմ գնա, յես կուլիզադեյի մոտ չեմ

ուզում գնալ: Դու իրավունք չունես ինձ քաշը շելու, — Ռահիմն աշխատում եր դուրս պրծնել Մանաֆի ձեռքից:

Նույն ըոպեյին մոտ վաղեց կուլիզադեն և բռնեց Ռահիմի թևից:

— Գնանք, գնանք, — բոլորովին հանգիստ, նույնիսկ, կարծես մի քիչ ժպտալով ասաց կուլիզադեն:

Ռահիմը նայեց կուլիզադեյին և ախ ու վախն սկսեց:

— Վայ, վոտս, Վայ, յես կաթված կստանամ:

— Յերեխաներ, սա Ռահիմն ե: Ռահիմը ջարդեց ակվարիումը: Այ, եդ Ռահիմը, — ճշաց Մայանեն:

Հենց այդ ժամանակ սանդուխքի վրա նորից աղմուկ բարձրացավ: Ինչ-վոր մեկն արագ վազում եր սանդուխքով, ապա դուռը կամացուկ բացվեց, և շենքին յերևաց մի աղջիկ: Վոչ վոք, իհարկե, դռան կողմը չեր նայում: Բոլորն զբաղված եյին Ռահիմով: Իսկ աղջիկը կանգնած մտիկ եր անում: Դա Գյուլիզարն եր, այն Գյուլիզարը, վոր մի որ ջրհորի մոտ նստել եր ֆաթմա տատիկի տեղը: Մայան առաջինը նկատեց Գյուլիզարին:

— Տես, զբաղարանապետ, տեսէք, յերեխաներ, այ, Գյուլիզարն ե յեկել մեզ մոտ:

Բոլորը յետ նայեցին: Իսկ Գյուլիզարն արագ-արագ սսաց:

— Այսա, Զփլաղը կորել ե: Շուտ արա, վազիր տուն: Մայրդ ինձ ուղարկել ե մոլայի մոտ՝ քո յետելից:

XII.

ԻՍԿ ԴՈՒ ԶԵ՞Ս ՀԱՍԿԱՆՈՒՄ, Ի՞ՆՉ Ե

Զրհորի մոտ նստած եր Զեյնաբը: Նա շրջել եր բոլոր հարեան բակերը, վազել եր նույնիսկ մինչև ծովը: Ամեն տեղ փնտոել եր Զփլաղին: Տղան չկար ու չկար:

Ֆաթման տատիկն ել եր նստած ջրհորի մոտ:

— Զփլաղը, հա Զփլաղը: Ի՞նչ ես դու ել դրա յետելից քարշ գալիս: Հիվանդ լակոտ ե, լավ, ալմաստ չի, վոր կորչի, մի վախիր:

Զեյնաբը լուռ եր: Նա ծածկոցը քաշել եր գլխին: Այնային եր սպասում: Գուցե Զփլաղը նրա փեշեց եր կողել, հետը գնացել:

Զեյնաբն այդ որը գնացել եր Քիշի — բանվորական նոր ավանը: Նա ամբողջ առավոտը տանը չեր: Քիշի ու ամուսնու յետելից, նայում եր նոր տներին, խանութում հերթ եր կանգնում: Հետո փաթաթվելով իր ծածկոցի մեջ, տրամվայ նստեց և տիուր մտածում եր, թե ինչի յե հարկավոր այս բոլորը, և թե ինչպես պիտի նա ասլրի այդ նոր տանը, վարտեղ ջրհոր չկա, վորի մոտ կանայք հավաքվեն ու զրուցեն, վորտեղ բուրդ լվանալու տեղ չկա, և այնքան մարդ կա, այնքան աղմուկ:

— Ի՞նչ ես լոել փայլուն լուսնի նման, — վիմթինթում եր ֆաթման: — Վայ, ինչ վատ ժամանակներ են հասել: Ո՞վ եր տեսել, վոր յերեխաներին այդքան աղատություն տան: Ասում են՝ մոլլան եղակես ե ուզում: Մոլլան թող մի գա ու տեսնի, թե ինչ ե իր ուզածը:

Զեյնաբը լուռ եր:

Նա ել շատ բանի չեր հավանում այն բոլորից, ինչ ուզում եր մոլլան: Բայց չե վոր նա սովոր եր հնագանդվել մոլլայի կամքին: Նա սովոր եր հնագանդվել ամուսնու կամքին, ֆաթմա տատիկի կամքին: Յեվ չե վոր մինչեւ հիմա այստեղ այսպես են ապրել բոլոր կանայք: Այստեղ՝ հեռու մեծ քաղաքից, նավթի արդյունաբերությունից, ծովից: Այդպես ե յեղել միշտ: Տղամարդիկ գնացել են ցած մեծ քաղաքը՝ աշխատելու: Վոմանք աշխատում եյին նավթարդյունաբերության մեջ, վոմանք ել զանազան տեղերում: Զեյնաբը լավ չեր իմանում, թե վորտեղ: Բայց նըրանք գալիս եյին աշխատանքից, հարկավոր եր ճաշ պատրաստել նրանց համար: Հետո նըրանք նարդի եյին խաղում և կամացուկ զրուցում, վորին կինը չեր համարձակվում մասնակցել: Իսկ յերեխաների մասին արդեն ավելորդ ե ասել: Նըրանց ձայնն այլես չեր լսվում, յերբ տղամարդիկ տուն եյին վերադառնում:

Հիմա ամեն ինչ վոխվել ե:

Մակայն ի՞նչ հոգատար ե իրենց մոլլան: Նա Զփլաղի համար գեղեցիկ նկարներ ե ուղարկում՝ զբքերի մեջ դրած, և ինչքան աշխատասեր ե գարձել Այսան, իհարկե, փոխվել են ժամանակները, և մոլլաներն ել բոլորովին ուրիշ տեսակ են հիմա: Պիտի ընտելանալ:

— Դադա, ուր ե Զփլաղը, — ճշալով բակն ընկավ
Այսան:

Զեյնաբը յետ զցեց ծածկոցը:

— Ուր ե Զփլաղը, Այնա, ուր ե:

— Զգիտեմ, — պատասխանեց Այնան: — Յերբ յես գնում
եյի, նա եստեղ եր:

— Կդանվի յերեխան, ասեղ հո չի, վոր կորչի, — Փընթ-
փնթում եր Ֆաթմա տատիկը: Բայց Զեյնաբը որորում
եր գլուխը:

— Փրկիր, ալլահ, վողորմիր: Ել վորտեղ վինառեմ: Ուր
գնամ: Շուտով մութը կընկնի:

Այնան և Լալան կանգնած եյին Զեյնաբի առաջ: Զեյ-
նաբը նորից ծածկոցը քաշեց գլխին:

— Մենք կդնանք, — ասաց Այնան:

Զեյնաբը վոչինչ չասաց: Աղջիկները մի քիչ ել կանգ-
նեցին, հետո Լալան կամացուկ ասաց:

— Այսա, գնանք Կուլիզադեյի մոտ: Գուցե նա կոզնիւ:

Հնթերցարանում Ռահիբը չկար արգեն, յերեխաները
ցրվել եյին, և միայն Կուլիզադեն ու Ղափլանն եյին
զբաղված գրադարակների մոտ:

— Կուլիզադե, գրադարանապետ, լսիր, Զփլաղը կորել
ե: Ի՞նչ անենք:

— Ի՞նչ, — հարցրեց Կուլիզադեն: — Ո՞վ ե կորել:

— Զփլաղը, սրա փոքրիկ յեղբայրը:

— Յես վոչինչ չեմ հասկանում: — Կուլիզադեն մի
բուռը մեխ լցրեց տուփի մեջ:

— Մոլլան ե արել, — հեծկլտաց Այնան և հանկարծ
բարձր ձայնով լաց յեղավ:

— Մանափ, եյ, Մանափ, արի եստեղ: Մոլլան ի՞նչ ե
արել:

Մանափը վոչինչ չպատասխանեց Կուլիզադեյին: Նա
միայն Այնային ասաց:

— Ի՞նչ ես ձենդ զցել: Հիշում ես, մի անգամ ել Զըփ-
լաղը կորավ, հետո գտնվեց:

— Վ՞չ, հիմա չի գտնվի, ել չի գտնվի: Յես գիտեմ,
ասում եր Այնան և ավելի բարձր հեկեկում՝ կեղտուա-
բուռնցքներով դեմքը նախշելով:

— Բանն ինչումն ե, բանն ինչումն ե, Մանափ:

Մանափը մի վոքք շփոթվեց: Ինչպէս այս բոլորը պատ-
մել Կուլիզադեյին: Ինչպէս:

— Տեսնում ես, յեղբայրս կորել ե, — դանդաղ սկսեց
նա, — իսկ Այնան կարծում ե, թե դրանով մոլլան ե պատ-
ժել իրեն:

— Մոլլան, ինչու մոլլան, — վոչինչ չհասկացավ Կու-
լիզադեյն:

Մանափը բոլորովին շփոթվեց: Ախր, ինչպէս պատմել
դրա մասին: Այն ժամանակ Մայանեն մեջ ընկավ: Նա
գժվար բոպեներին միշտ ոգնության եր համուռմ:

— Ախր, գրադարանապետ, Այնան մոլլայի մոտ եր
գնում, իսկ մենք նրան կանչեցինք եստեղ:

— Հետո:

— Դե կանչեցինք եստեղ, ելի:

Այնան դադարեց լաց լինել: Նա ականջ եր գնում Մա-
յանեյին: Վ՞ո՞չ, Մայանեն բոլորովին այն չի ասում, բոլո-
րովին: Նա հանկարծ բոնեց Կուլիզադեյի ձեռքից:

— Այ, լսիր: Յես տանն ասում եմ, թե գնում եմ մոլ-
լայի մոտ, բայց գալիս եմ եստեղ: Դադան կարծում ե, թե
մոլլան ե ինձ գրքեր տալիս և չի բարկանում:

Կուլիզադեն կարծես թե սկսում եր մի քիչ հասկանալ:

— Ուրեմն յես ձեր բակի մոլլան եմ յեղել: Այնպես չի:

— Զե, համարյա թե, — հանկարծ խոսեց Մանափը,
յերբ ամենազլխավորն արգեն ասված եր: — Գիտես, եղ
բոլորի պատճառը Ֆաթմա տատիկն ե...

Կուլիզադեն հոնքերը կիսեց և սկսեց մազերը խճճել:
Բարկանում ե նա, թե ծիծաղում:

— Վ՞այ, դու չգիտես, թե մեր բակում ինչ տհաճ բան
ե Ֆաթմա տատիկը, — շարունակեց Մանափը:

— Դու հասկանում ես, հասկանում ես, — ճշում եր
Մայանեն:

Իսկ Այնան կանգնել և հերթով նայում եր բոլորին:
Դեմքին քսված եր ձեռքերի կեղտն ու արյունքը, հյուսերը
դես ու գեն եյին ցցվել: Նա սուսիկ-փուսիկ սպասում եր,
թե հետո ինչ ե լինելու:

— Իսկ դու չես հասկանում, ի՞նչ ե: Միթե չես հաս-
կանում, — ջղայնանում եր Մայանեն: Ել ինչու յես լոել:

Կուլիզադեն մի վայրկյան խիստ հայցքով նայեց Մա-

— Դադա, ուր ե Զփլաղը, — ճշալով բակն ընկավ
Այսան:

Զեյնաբը յետ գցեց ծածկոցը:

— Ուր ե Զփլաղը, Այնա, ուր ե,

— Զփլաղը, — պատասխանեց Այնան: — Յերբ յես գնում
եյի, նա եստեղ եր:

— Կդտնվի յերեխան, ասեղ հո չի, վոր կորչի, — վենթ-
փնթում եր ֆաթմա տատիկը: Բայց Զեյնաբը որորում
եր գլուխը:

— Փրկիք, ալահ, վողորմիք, ել վմրտեղ փնտում: Ուր
գնամ: Շուտով մութը կընկնի:

Այնան և Լալան կանգնած եյին Զեյնաբի առաջ: Զեյ-
նաբը նորից ծածկոցը քաշեց գլխին:

— Մենք կդնանք, — ասաց Այնան:

Զեյնաբը վոչինչ չասաց: Աղջիկները մի քիչ ել կանգ-
նեցին, հետո Լալան կամացուկ ասաց.

— Այսա, գնանք կուլիզաղեյի մոտ: Գուցե նա կոգնիւ:

Ընթերցարանում Ռահիբը չկար արդեն, յերեխաները
ցրվել եյին, և միայն կուլիզաղեն ու Ղափլանն եյին
զբաղված գրադարակների մոտ:

— Կուլիզաղե, գրադարանապետ, լսիք, Զփլաղը կորել
ե: Ի՞նչ անենք:

— Ի՞նչ, — հարցրեց կուլիզաղեն: — Ո՞վ ե կորել:

— Զփլաղը, սրա փոքրիկ յեղբայրը:

— Յես վոչինչ չեմ հասկանում: — Կուլիզաղեն մի
բուը մեխ լցրեց տուփի մեջ:

— Մոլան ե արել, — հեծկլտաց Այնան և հանկարծ
բարձր ձայնով լաց յեղափ:

— Մանափ, եյ, Մանափ, արի եստեղ: Մոլան ի՞նչ ե
արել:

Մանափը վոչինչ չպատասխանեց կուլիզաղեյին: Նա
միայն Այնային ասաց.

— Ի՞նչ ես ձենդ գցել: Հիշում ես, մի անգամ ել Զըփ-
լաղը կորավ, հետո գտնվեց:

— Վոչ, հիմա չի գտնվի, ել չի գտնվի: Յես գիտեմ,
ասում եր Այնան և ավելի բարձր հեկեկում կեղտու-
բունցքներով դեմքը նախշելով:

— Բանն ինչումն ե, բանն ինչումն ե, Մանափ:

Մանափը մի փոքր շփոթվեց: Ինչպէս այս բոլորը պատ-
մել կուլիզաղեյին: Ինչպէս:

— Տեսնում ես, յեղբայրս կորել ե, — դանդաղ սկսեց
նա, — իսկ Այնան կարծում ե, թե դրանով մոլան ե պատ-
մել իրեն:

— Մոլան, ինչու մոլան, — վոչինչ չհասկացավ կու-
լիզաղեն:

Մանափը բոլորովին շփոթվեց: Ախր, ինչպէս պատմել
դրա մասին: Այն ժամանակ Մայանեն մեջ ընկավ: Նա
դժվար բոսկներին միշտ ոգնության եր հասնում:

— Ախր, գրադարանագետ, Այնան մոլայի մոտ եր
գնում, իսկ մենք նրան կանչեցինք եստեղ:

— Հետո՞:

— Դե կանչեցինք եստեղ, Ելի:

Այնան դադարեց լաց լինել: Նա ականջ եր գնում Մա-
յանեյին: Վոչ, Մայանեն բոլորովին այն չի ասում, բոլո-
րովին: Նա հանկարծ բոնեց կուլիզաղեյի ձեռքից:

— Այ, լսիք: Յես տանն ասում եմ, թե գնում եմ մոլ-
լայի մոտ, բայց գալիս եմ եստեղ: Դադան կարծում ե, թե
մոլան ե ինձ գրքեր տալիս և չի բարկանում:

Կուլիզաղեն կարծես թե սկսում եր մի քիչ հասկանալ:

— Ուրեմն յես ձեր բակի մոլան եմ յեղել: Այնպես չի:

— Զե, համարյա թե, — հանկարծ խոսեց Մանափը,
յերբ ամենապիսավորն արդեն ասված եր: — Գիտե՞ս, եղ
բոլորի պատճառը ֆաթմա տատիկն ե...

Կուլիզաղեն հոնքերը կիտեց և սկսեց մազերը խճճել:
Բարկանում ե նա, թե ծիծաղում:

— Վայ, դու չգիտես, թե մեր բակում ինչ տհաճ բան
ե ֆաթմա տատիկը, — շարունակեց Մանափը:

— Դու հասկանում ես, հասկանում ես, — ճում եր
Մայանեն:

Իսկ Այնան կանգնել և հերթով նայում եր բոլորին:
Դեմքին բաված եր ձեռքերի կեղտն ու արյունքը, հյուսերը
դես ու դեն եյին ցցվել: Նա սուսիկ-փուսիկ սպասում եր,
թե հետո ինչ ե լինելու:

— Իսկ դու չես հասկանում, ի՞նչ ե: Միթե չես հաս-
կանում, — ջղայնանում եր Մայանեն, ել ինչու յես լոել:
Կուլիզաղեն մի վայրկյան խիստ հայացքով նայեց Մա-

յանելին, ասլա հանկարծ ծիծաղեց։ Այդ ի՞նչ ե, իսկապես
նա ծիծաղում ե, ծիծաղում ե այդպիսի կարևոր բաների
վրա։ Յերեխ այդպես ե, վորովճետե նա ծիծաղելով քաշեց
Այնալին իր մոտ և ասաց։

— Իսկ դու ինչո՞ւ յես լալիս։

Բայց չե՞ վոր Այնան ել չեր լալիս։ Իսկ կուլիդա-
ղեն նույնիսկ այդ չեր նկատել նա նորից կը կնեց։

— Ուրեմն յես ձեզ համար մոլլա յեմ յեղել։

— Այն, մոլլա, — միանգամից պատասխանեցին յերե-
խաները և, իրար խոսքը կարելով, միաժամանակ և ծիծա-
ղելով, և լալով (վորովճետե Այնան նորից սկսել եր լաց
լինել) նրանք պատմեցին կուլիդաղեյին՝ փոքրիկ Այնայի
ամեռող պատմությունը։

— Իսկ Ֆաթմա տատիկը միշտ ասում ե. «Ինչ տարո-
քինակ և հիմա դարձել մեր մոլլան»։

Բայց Այնան այնքան ել գոհ չեր, վոր ծիծաղում են։

— Լոիր, լոիր, զբաղարանապետ, իսկ յեթե հանկարծ
Զփլաղն իսկապես չգտնվի։ Հանկարծ, ճիշտ վոր չգտնվի, —
և Այնան, հիշելով Զփլաղին, պատրաստվում եր նորից
հեկեկալ։

— Բավական ե, — ասաց կուլիդաղեն։ — Հերիք ե, տղերք։
Գնանք Զփլաղին վնասուելու։ Իսկ մնացածի մասին ել հետո
կխոսենք։

XIII.

ՎԱՅ, ԶՓԼԱՂ, ԴՈՒ ՎՈ՞ՆՑ ԸՆԿԱՐ ԵՍՏԵՂ

Զփլաղը դարպասից դուրս յեկավ։ Դարպասի առաջ,
մեկը մյուսի յետեկից կանգնած եյին ուղաբերը։ Զփլաղը
մոտեցավ առաջին ուղաբին, կանգնեց ուղիղ նրա գնչի տակ
և գլուխը բարձրացնելով՝ ասաց, «Բարե՛ ձեզ, ուղտ»։ Զըփ-
լաղը ծիծաղեց, վորովճետե նրան թվաց, թե ուղար գլուխն
իջեցնելով նույնպես ասաց. «Բարե՛, Զփլաղ»։

— Նոե՛-չոք-նոե՛, — մրթմրթաց ուղատապանը և շոյեց
առաջին ուղար պարանոցը։ Ուղան ավելի կուցըրեց գլուխը,
բայց հիմա արդեն վոչ Զփլաղի համար։ Նա ինչ-վոր բան
ասաց իր ուղտի լեզվով՝ վորը մի քիչ նման ե ագռավի
դառնառոցին, և գնաց։

Զփլաղիը հառաջեց և կամաց-կամաց գնաց ուղտերի յե-
տեկից։ Ուղտերը հասան փողոցի անկյուններ։ Զփլաղն ել հա-
սավ այստեղ։ Ուղտերն անցան մյուս փողոցը։ Զփլաղը
նույնպես անցավ մյուս փողոցը։ Բայց ուղտերն այնքան
ուղիղ եյին գնում, վոր կարծես թելի վրա շարված լինե-
յին։ Վոչ վոր այնպես ուղիղ չի կարողանում քայլել, ինչ-
պես ուղտերը։ Իսկ Զփլաղը որորվում եր իր ծուստիկ
փոտների վրա, բանում եր քարերից, վայր ընկնում, զըն-
նում եր այն քարերը, վորոնց վրա ընկնում եր և ամենին
լաց չեր լինում։ Նույնիսկ դուր եր գալիս նրան՝ պառկել
քարերի վրա և նայել, թե ինչպես եյին ուղտերի վոտները
փոշի բարձրացնում։

Նա պառկել ու նայում եր։ Ուղտերը գնում եյին մեկը
մյուսի յետեկից։ Զփլաղը նայեց, նայեց և հանկարծ տե-
սավ, վոր ուղտերն ել չկան։ Նա վեր կացավ և գնաց այն
կողմը, ուր ուղտերը գնացին, բայց ուղտերը չկային, իսկ
Զփլաղը գնում եր ու գնում հանդարտ։ Շուտով նա բոլո-
րովին մոռացավ ուղաբերի մասին։ Անա մի դարպաս, նման
այն դարպասին, վորից Զփլաղը դուրս յեկավ քիչ առաջ։
Դարպասի առաջ յերեխաներ կային, իսկ մի աղջիկ, իսկ
և իսկ Այնայի նման, իշուկի պես վազում եր փողոցով
և նրա շալակին նստած եր մի ուրիշ աղջիկ — շատ փոք-
րիկ աղջիկ։ Մեծ աղջիկն աքացի յետալիս, իսկ փոքրիկը
ծիծաղում ե։

— Արի, քեզ ել շալակեմ, — ճաց մեծ աղջիկը, յերբ տե-
սավ Զփլաղին։ Յեկ Զփլաղը փաթմթվելով բարձրացավ մեծ
աղջկա շալակը, սկսեց քշել նրան ու ծիծաղել։ Փոքրիկ
աղջիկը վազում եր նրանց յետեկից և նույնպես ծիծաղում։

Հետո յեկավ մի պառավ կին, դադայի նման, Զնայած
դադան՝ Զեյնաբը այնքան ել պառավ չեր, բայց Զփլաղին
թվում եր, թե նա բոլորովին պառավ ե, կինը հարցըեց։

— Ո՞ւմ տղան ես։ Դու ուժն ես։

— Այնայինն եմ — պատասխանեց Զփլաղը և ձեռքը
մեկնեց դեպի հացը, վոր կինն սւզում եր բաժանել յերե-
խաներին։

— Միենույնն ե, թե ուժն ես. յերեխան յեթե ուտել
ե ուղում, պետք ե տալ. — և կինը մի մեծ կտոր լավա-
կտրեց Զփլաղի համար։

Մածոն, մածոն,
Ո՞վ ե ուզում մածոն.

գոռում եր փողոցում մի ծերուկի: Չփլաղն ել գոռաց.
«Մածոն, մածոն»: Փոքրիկ աղջիկն ել գոռաց. «Մածոն,
մածոն»: Չփլաղը գնաց ծերուկի և իշուկի յետելց, իսկ
փոքրիկ աղջիկը փախավ իրենց բաղը:


Սարից դեպի ցած՝ իշուկն սկսեց ավելի արագ վազեր:
Տըլկ-տըլկ... խփում եյին սմբակները գետնին:

Ծերուկի վազում եր կողեից:

— Կաց, սպասիր մի քիչ: ԴԵՇ, իշուկ ջան, դԵՇ,
սպասիր:

Բայց իշուկը չեր սպասում, իսկ ծերուկի ի՞նչ գործն
եր, թե ո՞ւմն ե այդ ծուռտիկ վոտներով յերեխան:

Չփլաղն ելի մի քիչ վազեց և կանգ առավ:
Նրա մոտից զանազան մարդիկ եյին անցնում:



Մորուքով տղամարդիկ՝ մեծ փափախով ու պորտֆելով,
կանայք՝ զամբյուղներով ու պայուսյակներով: Շատերը
չաղբայով փաթաթված եյին, ինչպես դադան, մայթերի
վրա տկտկում եյին կանացի բարձր կրունկները, ճշում
եյին փոքրիկ տղաները, զբնդում եր տրամվայը, աղմկում
եյին ավտոների շշակները,— այդ բոլորն ամենին նման
չեր այն փողոցին, գորտեղ Չփլաղն եր ապրում:

Չփլաղը կանգնել ու նայում եր: Վհչ վոք նրան չեր
նկատում: Չփլաղը հոգնեց կանգնելուց: Նա քաշվեց պատի
տակ և նստեց: Մի բանի բոպելից հետո Չփլաղն արդեն

խորը քնած եր: Ռոպեներն անցնում եյին նույնպես արագ:
ինչպես վազում եյին մարդիկը Անցնում եյին ժամերը: Ան-
ցավ մի ժամ, գուցե յերկու, բայց գուցե և յերեք:

Չփլաղը դեռ քնած եր:

Ահա արեն իջավ, մոտեցավ ծովին: Ծովում, համարյա
թե արեկ մոտ, կանգնած եր նավը: Թվում եր, թե նա
կանգնած ե հեռու ծովում: Բայց իհարկե, նավը կանգնած
եր բոլորովին մոտիկ, ափի մոտ: Ծածանվում եյին առա-
գաստները, պտտվելով վեր եյին բարձրանում փոկերը,
տախտակամածի վրայով դես ու դեն եյին վազում նավաս-
տիները: Շոգենավը թշշում եր, հառաջում, կռնչում: Հան-
կարծ նա զիկ սուլեց, ճշաց և մռնչաց: Այդ նշանակում
եր,— յեկանք, ընդունեցեք:

Այդ սուլոցից Չփլաղն արթնացավ: Յերկար ժամանակ
նա դեռ վոչինչ չեր կարողանում հասկանալ:

— Այսա, ուր ե Այսան: — Յեվ հրես ես ում վոտներն
են, ուղղիղ նրա դեմքի մոտ— դեղին տուֆլիներով բարձր
կրունկների վրա: Յեվ հետո ելի վոտներ, բայց բորիկ: Ելի
նորից վոտներ, Միթե կարելի յե մի բան հասկանալ, յերբ
միայն վոտներ ես տեսնում:



Չփլաղը պառկած եր գետնին, փռված, լավաշի կտորը
ձեռքին սեղմած և վոտներից բացի վոչինչ չեր տեսնում:
Վոտներն զգույշ անցնում եյին Չփլաղի մոտից: Թող քնի
փոքրիկ տղան:

Յեվ յելը Չփլաղի վրայից անցավ մի մեծ սև կոշիկ,
Չփլաղը շուռ յեկավ փորի վրա և, չորս թաթի վրա կանգ-
նելով՝ տեսավ մեծ շոգենավ ծովի մեջ: Վոտքի կանգնելով
նա գնաց դեպի նավը: Նա գնում եր, գնում, բայց նավն
ամենեին նըան չեր մոտենում: Չփլաղն սկսեց բարձրա-
ձայն լալ: Սկզբում մի քիչ կամաց, իսկ հետո ավելի ու

ավելի բարձր։ Մերթ գոռում եր նա, մերթ մեղմ ձայնով
լախ։ Յերբեմն կանգնում եր ու իր լացին ականջ դնում,
իսկ յերբեմն լացը կարում եր, վոր լավաշից մի քիչ կծի։

Սյապիսով Զփլաղը հասավ մի ինչ-վոր փողոց և կորց-
րեց նավը, վորովհետև մեծ աները ծածկեցին ծովը նրա
աշքից. բայց դրա փոխարեն Զփլաղն անկյունում տեսավ
կոշիկ մաքրողին. Նա կանգ առավ և լացը կարեց. Կոշիկ
մաքրողը նայեց Զփլաղին և ծիծաղեց։

— Ե՞ր, Զփլաղ, ինչ ես ուզում, — հարցրեց նա.

Նա, ինարկե չփատեր Զփլաղի անունը, բայց չե՞ վոր
չփլաղ՝ նշանակում է մերկ, ակլոր. Իսկ Զփլաղն, իսկա-
պես, վոր տկլոր եր. Բացի փափախից և կարճիկ շապկից,
վոչինչ չկար նրա հաղին։

Զփլաղը մոտեցավ կոշիկ մաքրողին և պարզեց նրան
լավաշի կտորը. Կոշիկ մաքրողը նորից ծիծաղեց։

— Դու կեր, նստիր եստեղ — ասաց նա ձեռքով ցույց
տալով իր արկղը։

Զփլաղը նստեց և մատն զգույշ քսեց արկղին. Սկզբում՝
կողքից, հետո՝ վորտեղ վոտն են դնում, հետո ել կոացավ
ու նայեց արկղի տակ։

Կոշիկ մաքրողը մտերմաբար թեթև խփեց Զփլաղի մեջ-
քին. Զփլաղը վոչինչ չեր ասում, բայց արդեն լաց ել չեր
լինում. Նրան դուր եր գալիս կոշիկ մաքրողի կողքին այս-
պես նստելը։

— Ե՞ր, Յուսոն, — հանկարծ գոռաց կոշիկ մաքրո-
ղը. — Ե՞ր, Յուսոն, բեր՝ կոշիկներդ մաքրեմ. Հայելու
նման կփայլեցնեմ։

Անցնում եր Յուսոնին իր ուղար հետ. Նա նայեց իր
բորիկ վոտներին։

— Բարե՛, Մուստաֆա. Քեֆդ վհնց եւ.

Կոշիկ մաքրող Մուստաֆան բաց արեց իր սպիտակ
ատամները։

— Թո՞ղ Յուսուֆի քեֆը վատ լինի, Մուստաֆայի քեֆը
տեղն ե. Ա՛յ, հրես ալլահը վորդի յե տպել։

— Ի՞նչ վորդի։

Մուստաֆան ցույց տվեց Զփլաղին. Յուսուֆը մի ըոսե
կանգ առավ։

— Ե՞ր, Ասլան, մտիկ արա, ես քո տղան չի։

Փողոցով՝ Յուսուֆից մի քիչ հեռու անցնում եյին մի
խումբ տղամարդիկն. Դրանք Քիշիյում աշխատող բանվոր-
ներն եյին, վոր աշխատանքից հետո վերադառնում եյին
տուն։

— Ի՞նչ տղա, — հարցրեց Ասլանը և հանկարծ տեսավ՝
Զփլաղին։

Իսկ Զփլաղը նայում եր հորը և կարծես չեր ճանաշում՝
նրան. այստեղ այնքան շատ՝ իրար նման քեռիներ կային։
միատեսակ փափախներով և միատեսակ փոշոտ հագուստ-
ներով։

Յեվ յերբ հայրն ասաց. «Կայ: Զփլաղ, դու վհնց ընկար-
եստեղ», միայն այն ժամանակ Զփլաղը ճանաչեց նրան, ճը-
շաց և ձեռները պարզեց. Հայրը գրկեց նրան։

Կոշիկ մաքրող Մուստաֆան բաց արեց սպիտակ ատամ-
ները։

— Այ քեզ դժբախտություն. Ալլահը մի անգամ ինձ
վորդի ուղարկեց, են ել բոլորովին տկլոր — չփլաղ։

— Բեր, յերեխային դիր ուղար վրա, — ասաց Յու-
սուֆը — թող մի քիչ ման գա։

Զփլաղը թաթիկները պարզեց դեպի ուղար. Իսկ ուղարը
չոքեց, վորովհետև Յուսուֆը թեթև խփեց նրա պարանտ-
ցին, և ասաց. «Նոե-նոե, Բիլբուր, ոթուր»։ Դա նշանակում
է. «Նսակիր, Բիլբուր»։ Ապա Յուսուֆը խուրջինի իրերը
բոլորը դրեց մի կողմում. Իսկ Զփլաղին նստեցրեց մյուս
կողմում։

— Գնանք, — ասաց հայրը.

Իսկ Մուստաֆան գոռում եր նրանց յետեից.

— Յտեսություն, Զփլաղ, վորդիս, ելի՛ կգաս եստեզ։

XIV.

ՅՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՅՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՉԵՎ ՎԱՂԵ

— ԴԵ՛, յես ամեն տեղ հայտնել եմ, — ընթերցարան
մտավ կուլիզադեն, — Զփլաղը շուտով կդժնվի։

Այնան, Լալան և Ղափլանը նստած եյին պատուհանում։

— Գուցե Մանաֆը դանի նրան, — ասաց Ղափլանը. —
Նա հիմա պիտի գա։

Ղափլանը գլուխը դուրս հանեց պատուհանից։ Փողով անցնում եր Բիլբուլ ուղար, իսկ ուղարի յետեկիք գնում ելին Յուսուֆին ու Ասլանը։

— Հայրդ ե գալիս—հրեց Այնային Ղափլանը։

Այնան ցած թռավ պատուհանից։ Լալան պատուհանից սայեց և հանկարծ ճշաց։

— Զփլաղը, անս։ Զփլաղը։ Ուղտով ե գալիս։

Այնան մոռացավ, վոր իր հայրն ե գալիս։ Նա նորից թռավ պատուհանը և նույնպես ճշաց։

— Զփլաղը, Զփլաղը։

Խուրջինից դուրս եր ցցվել Զփլաղի գլուխը՝ մեծ փափախով։ Նա լսեց իր անունը, ճանաչեց Այնայի ձայնը և, դեռ նրան չտեսած, մեղմիկ ձայնով, ուրախացած ասաց։

— Այնա, յես ուղտով գնում եմ։ Տես, Այնա։

Բայց Այնան չեր նայում։ Նա արդեն սանդուխքով ցած եր վազում դեպի Զփլաղը։

— Դու ուր եյիր կորել—լալով ճշում եր Այնան, — Դու ուր եյիր կորել։

Այնայի շուրջն եյին արդեն հավաքվել և կուլիգաղեն, և Ղափլանը։ Լալայի հետ։ Բոլորը գոռում եյին, իրար խանդարում և ձեռները պարզում դեպի Զփլաղը։

— Ի՞նչ ե պատահել—հարցըց Ասլանը, — Ի՞նչ ե պատահել։

Նրան վհչ վոք չեր պատասխանում, իսկ նա կարծես թե բոլորովին չզարմացավ, յերբ այստեղ հանդիպեց Այնային։

— Արի եստեղ։ Զփլաղ, — ձեռները բարձրացրեց Այնան և Զփլաղը խուրջինում՝ բարձրացավ տեղից։ Բիլբուլի կուղ մեջը շարժվեց—հիմա իսկույն Զփլաղը կընկնի։ Բայց ուղար զգույշ չոքեց և նույնպես մի բան ասաց, յերգեց իր լեզվով, վորովհետեւ հո իզուր չեր, վոր Բիլբուլ եյին կանչում նրան, այսինքն՝ սոխակ։

Կուլիգաղեն Զփլաղին հանեց խուրջինից։

— Ա՛ռ, վերցըու, — ասաց նա Այնային։ — Ուրեմն Զփլաղը սա յե։

— Զփլաղն ե, իհարկե, Զփլաղն ե, — ծիծաղեց Այնան և մեջը դեմ արավ Զփլաղին, իսկ Զփլաղն իր սովորական շարժումով կպավ Այնայի մեջքին։

Ա՛յ, հիմա իսկույն Այնան կվազի տուն։ Ինչքան կառող ե, արագ կվազի, կհասնի դադային ու կճշա։ «Առ քո Զփլաղին»։

Ցեվ հանկարծ Այնան տեսնում ե, վոր բոլորովին ել կարիք չկա տուն վաղելու, վորովհետեւ հենց ինքը դադան և հաստիկ լալան դիմավորում են նրան։ Նրանք միասին գնում եյին մոլայի մոտ։ «Գուցե կոգնի» մտածում եր Զեյնաբը։

— Վայ, Զփլաղ, վայ, բալես, — միայն այս առաց Զեյնաբը և Այնայից խլելով Զփլաղին, սեղմեց նրան իր կրծքին։

Զփլաղը թռչկոտում եր նրա գրկում, բարձրացնում եր գլուխը, իսկ փափախի տակից դուրս եյին ցցվել նրա մեծ-մեծ ականջները։

Նա ասում եր։
— Յես ուղտ եմ նստել, գագա։ Ոյ, դադա, լսիր ե; դադա։

Բայց դադան, վոչինչ չեր լսում։ Ժողովուրդը հավաքվեց նրանց շուրջը։ Յուրաքանչյուրն ուղում եր իմանալ։ Թե ինչ ե պատահել, ինչու յեն ուղտի շուրջը հավաքվել։

— Վոչինչ, վոչինչ չի պատահել։ Փոքրիկ տղան կորել եր, դանվեց, — ասաց Յուսուփ։ — Նոե-չոք-նոե, գնանք, Բիլուրը։

Ուղտը լուրջ ու հպարտ առաջ ընթացավ փողոցով։
— Ի՞նչ ե պատահել, — նորից հարցըց Ասլանը։

— Գնանք, գնանք ընթերցարան, կխոսենք։ Ցեվ բոլորը գնացին ընթերցարան։ Բոլորի հետ գնաց և Զեյնաբը։

— Նստեք, նստեք, մեզ մոտ աթոռներ շատ կան։
Բոլորը նստեցին և կուլիգաղեն պատմեց Ասլանին։ թե ընթերցարանի և թե Այնայի մասին։

Բոլորը լուռ լսում եյին, իսկ յերեխաներին թվում եր, թե կուլիգաղեն ուրիշ յերեխաների մասին ե պատմում—այնքան, վոր դուր եր գալիս նրանց այդ պատմությունը։

Միայն Զեյնաբն եր, վոր կարծես չեր լսում։ Նա որում եր Զփլաղին։ Սակայն, յերբ նա գրպանն եր գնում այն փողը, վոր մոլային պիտի տար, մի վայրկյան մտքում ասաց։ «Ա՛յ, հիմա փողն ել մեր գրպանում կմնա»։

Այսան և Լալան, ինչպես միշտ, միասին նստած եղին
մի աթոռի վրա:

Այսան փսփռմ եր Լալայի ականջին.

— Իսկ յեթե Զգլաղը չգտնվեր, ուրեմն մոլան եր
պատժել:

Մանաֆը լսեց: Նա միշտ լսում եր ամեն-ինչ և այն,
վոր պետք եր, և այն, վոր պետք չեր:

— Յեթե իմ տատիկը մորուք ունենար, ուրեմն նա
պապիկ կլիներ, վոչ թե տատիկ,—ասաց Մանաֆը:

Այսան պատկերացրեց Ֆաթմա տատիկին՝ յերկար մո-
րուքով, մինչև գետին հասած և ծիծաղեց: Լալան նույն-
պես ծիծաղեց: Զգիտես ինչու: Ղափլանն ել ծիծաղեց,
իսկ նրանից հետո սկսեցին ծիծաղել և մյուսները: Պատ-
ճառ չկար: Ուղղակի ուրախ եյին բոլորը:

Իսկ պատուհանում քնած եյին ակվարիումի ձկնիկները:
Անկյունում՝ բարձր ձողի վրա դողդոջում եյին մեծ գրքի
նախշուն թերթերը: Հատակին փռված եր մեծ, դեղին
պլակատը և պատուհանից ներս եյին ընկել արեի վերջին
շողերը:

— Ցտեսություն,—ասաց Կուլիզադեն:—Ցտեսություն
մինչև վաղը:

Այսպես վերջացավ փոքրիկ Այսայի պատմությունը:
Դրանից հետո շատ տարիներ են անցել արդեն: Կուլիզա-
դեյի մոտ՝ ընթերցարանը բոլորովին ուրիշ յերեխաներ են
գաղում: Յեվ վերջերս Զգլաղը, հենց ինքը, փոքրերի
համար անկյուն եր սարքել բայց վոչ թե կուլիզա-
դեյի մոտ, այլ այն նոր ընթերցարանում, վոր կառուցված
եր բանվորական նոր ավանում: Հենց այն ավանում, ուր
վաղուց եր արդեն տեղափոխվել Այսան:



ԳԻՆԸ 65 ԿՈՊ.

4488

Dela-Rasch
Station

И. С. ШЕР
А Й Н А



ԱՐՄԵՆԳԻԶ - ԷՐԻՎԱՆԻ

891.730
Հ-51